

Ուսանողի ձեռնարկ

8

Հնագանդություն Աստծուն

Սովորել հնագանդվել Աստծո առաջնորդությանը



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Հնազանդություն Աստծուն

Սովորել հնազանդվել Աստծո առաջնորդությանը

Չեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Հնազանդություն Աստծուն

Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Obedience to God, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Բովանդակություն

Գլուխ 1. Մեր և հնազանդություն	4
Ա. Նոր փոխհարաբերությունների կարիքը:.....	5
Բ. Ի՞նչ տեղ ունի հնազանդությունը Աստծո հետ իմ փոխհարաբերության մեջ:	8
Գ. Ինչո՞ւ հնազանդվել Աստծուն:	9
Դ. Ինչպե՞ս կարող եմ ես հնազանդվել Աստծո մեծագույն օրենքին:	11
Ե. Ի՞նչ տեղ ունեն դրդապատճառներն Աստծուն հնազանդվելու մեջ:.....	14
Գլուխ 2. Վերաբերմունքներ և հնազանդություն	16
Ա. Ստուգի՛ր այն վերաբերմունքները, որոնք հեշտացնում են Աստծուն չհնազանդվելը:	16
Բ. Զարգացրո՛ւ հնազանդ վերաբերմունքներ:	18
Գլուխ 3. Ո՞ր օրենքներին ես պետք է հնազանդվեմ	23
Ա. Աստծո օրենքների դասակարգումները:	24
Բ. Վիճաբանություն, թե ո՞ր օրենքներին է այսօր պետք հնազանդվել:	25
Գ. Հնազանդվի՛ր Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին:	28
Դ. Ի՞նչ է «Աստծո կամքը»:.....	31
Գլուխ 4. Աստծուն հնազանդվելու արդյունքները	35
Գլուխ 5. Աստծուն չհնազանդվելու արդյունքները	40
Ա. Ի՞նչ կարող եմ ես սովորել ուրիշների անհնազանդությունից:.....	40
Բ. Անհնազանդության հետ կապված չորս առանցքային բառեր:	42
Գ. Ինչպիսի՞ն է Աստծո վերաբերմունքն այն մարդկանց հանդեպ, ովքեր չեն հնազանդվում Իր օրենքներին:	48

Գլուխ 1

Մեր և հնազանդություն

Կարծում եմ՝ հիշում ես այն օրը, երբ դարձար ճշմարիտ քրիստոնյա: Եթե դա տեղի է ունեցել վերջին մի քանի ամսվա ընթացքում, ապա հեշտությամբ կարող ես հիշել, թե ինչպիսին էր քո կյանքը նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը:

Ճշմարիտ քրիստոնյա դառնալն ավելին է, քան պարզապես մի պարզ աղոթք անելը. այն ամբողջությամբ վերաբերում է Աստծո հետ նոր փոխհարաբերության մեջ մտնելուն: Մենք Աստծո թշնամի լինելուց դառնում ենք Աստծո հատուկ բարեկամը:

Կողոսացիներին 1:21-22.

«Եվ ձեզ, որ մի ժամանակ օտարացած էիք և մտքով թշնամի՝ չար գործերի մեջ, հիմա հաշտեցրեց Իր մարդեղեն մարմնի մեջ՝ Իր մահվամբ, որ ձեզ սուրբ, անբիծ և անարատ կանգնեցնի Իր առջև»:

Աստված ուզում է, որ մենք հասկանանք, թե ինչքան շատ է Նա մեզ սիրում: Նա ուզում է որդեգրել մեզ՝ որպես Իր սիրասուն զավակների:

Գաղատացիներին 3:26.

«Քանի որ դուք բոլորդ էլ Աստծո որդիներ եք՝ Քրիստոս Հիսուսի վրա եղած հավատով»:

Այս դասընթացն ուսումնասիրելիս ժամանակ հատկացրու և ինքդ քեզ սո՛ւր հետևյալ հարցերը.

Ի՞նչ է նշանակում Աստծո որդի կամ դուստր լինելը:

Ինչպե՞ս կարող ենք մենք փոխհարաբերություն ունենալ մեկի հետ, ում չենք տեսնում:

Ի՞նչ փոխհարաբերություն ունեմ ես Աստծո հետ:

Ա. Նոր փոխհարաբերությունների կարիքը:

1. Ինչպիսի՞ փոխհարաբերություններ են դու այսօր արժևորում:

Աստված ուզում է, որ մենք հասկանանք, որ ճշմարիտ քրիստոնյա լինելն ավելին է, քան պարզապես երկինք գնալու տոմս ունենալը: Երբ դառնում ենք ճշմարիտ քրիստոնյա, Աստված ուզում է, որ մենք ուշադիր նայենք, թե ինչ փոխհարաբերություններ ունենք մեր կյանքում և, եթե կարիք կա, փոխենք դրանք:

Մեր մշակույթը մեծ արժեք է տալիս անկախությանը: Այսօրվա մշակույթը քեզ ասում է. «Թույլ մի՛ տուր, որ ինչ-որ մեկը քեզ ղեկավարի»: «Ի՛նքդ տնօրինիր քո կյանքը»: «Եթե չափահաս ես, ուրեմն պայքարի՛ր քո անկախության համար»:

Սակայն Աստված ուզում է, որ մենք Նրա հետ ունեցած մեր փոխհարաբերությունը գնահատենք մնացած բոլոր փոխհարաբերություններից առավել: Նա նաև ուզում է, որ այդ փոխհարաբերությունն աճի և հասունանա: Եթե դու փոքրիկ քույր կամ եղբայր ունես, կամ քո փոքրիկն ունես, դու գիտես, թե ինչ է նշանակում երեխայի հետ փոխհարաբերություն ունենալ: Երեխայի աճելով ձեր փոխհարաբերությունները փոխվում են: Եթե երեխան, լինելով քսան տարեկան, իրեն պահում է երկու տարեկանի պես, դա այլևս զվարճալի չէ, այլ խնդիր է:

Ճիշտ նույն ձևով՝ Աստված ուզում է, որ մենք աճենք և այնպիսի փոխհարաբերություն զարգացնենք Նրա հետ, որը փոխվում՝ հասունանում է:

2. Ինչպե՞ս աճեցնենք նոր փոխհարաբերություններ:

Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, պետք է ուշադիր նայես, թե ովքեր են քո ընկերները: Նրանք օգնո՞ւմ են քեզ, որ ավելի լավ ճանաչես Աստծուն, թե՞ նորից հետ են քաշում հին մեղսալից կենսակերպի մեջ, որը դու ունեիր նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը:

Աստված ուզում է, որ դու այնպիսի ընկերներ ունենաս, որոնք քեզ կօգնեն աճել և դառնալ այնպիսին, ինչպիսին Աստված է քեզ ստեղծել, որ լինես: Դու, հնարավոր է, ստիպված լինես հրաժարվել որոշ մարդկանց հետ փոխհարաբերություններից, որոնք կխանգարեն Աստծո հետ ունեցած քո փոխհարաբերությանը: Սակայն անգամ քրիստոնյա ընկերների հետ՝ դու պետք է ինքդ քեզ հարցնես. «Այս ընկերն ինձ օգնո՞ւմ է ավելի մոտենալ Աստծուն»:

Ուրեմն, ինչպե՞ս ավելի խորը փոխհարաբերություն զարգացնել Աստծո հետ: Ո՞րն է հասունության ուղին: Ահա կյանքի մի քանի կարևոր ասպարեզներ, որոնք քեզ կօգնեն աճել և դառնալ այն հասուն անձնավորությունը, որ Աստված է ուզում, որ լինես:

— սեր

- հնազանդություն (Հովհաննես 14:15)
- մտքի նորոգություն (Հռոմեացիներին 12:1-2)
- սովորել դիմադրել մեղքի գայթակղություններին (Հակոբոս 4:7-8)
- ազնիվ լինել Աստծո և մարդկանց հետ քո փոխհարաբերությունների մեջ
- սովորել անկեղծ լինել
- սովորել իրականում վայելել կյանքը
- սովորել ապրել ազատության մեջ. իրական ազատության՝ առանց թմրանյութի, ուտելիքի, փողի, անցանկալի փոխհարաբերությունների կամ որևէ այլ բանի կապանքի մեջ լինելու:

3. Աստված ուզում է լինել քո Հայրը:

Երբ դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, դա նշանակում է, որ դու Աստծուն խնդրել ես՝ լինել քո կյանքի Առաջնորդը: Սակայն Աստված չի ուզում պարզապես լինել քո կյանքի «շեֆը» կամ «թելադրողը, թե ինչ անես»: Նա շատ ավելի մտերիմ փոխհարաբերություն է ցանկանում: Աստված օգտագործում է ընտանիքի օրինակը՝ նկարագրելու համար, թե ինչ կարգի մտերիմ փոխհարաբերություն է Նա փափագում քեզ հետ ունենալ:

Բ Կորնթացիներին 6:18.

«Փախե՛ք պոռնկությունից: Ամեն մեղք, որ մարդ գործում է, դուրս է իր մարմնից, բայց պոռնկություն անողն իր մարմնի դեմ է մեղանշում»:

Աստված ուզում է սիրող Հայր լինել քո կյանքում: Եթե դու ընտանիքում մեծացել ես բարի և սիրող հայր ունենալով, կարծում եմ, քեզ դժվար չի լինի հասկանալ, որ Աստված ուզում է քեզ համար լինել քո երկրավոր հոր նման, միայն թե շատ ավելի լավը:

Սակայն շատ նորադարձ քրիստոնյաների համար «հայր» հասկացությունը դժվար է ըմբռնել: Հայր Աստծուն իրենց երկրավոր հոր հետ համեմատելը բազմաթիվ ցավոտ հիշողությունների առիթ կարող է տալ նրանց: Շատերին իրենց հայրն իրենց համար օտար է: Շատերն են ունեցել բացակայող, կոպիտ, անզգա, եսասեր կամ կռվարար հայր:

«Իմ հայրը մահացավ, երբ ես շատ փոքր էի», - կիսվում է Հեղինեն, - մայրս նորից ամուսնացավ, և իմ խորթ հայրը տարիներ շարունակ սեռական բռնության էր ենթարկում ինձ: Երբ այդ բռնությունները վերջապես բացահայտվեցին, նա ձեռքազրկվեց: Ես ստիպված էի դատարանում վկայություն տալ: Մայրս նույնպես այնտեղ էր, սակայն նա ինձ համար չէր եկել: Նա նստել էր խորթ հորս հետ»:

Էրիկի հայրը երբևէ չէր գոհանում նրանից: «Դու երբեք ոչ մի բանի չես հասնի», - շարունակ կրկնում էր Էրիկի հայրը: «Այդ խոսքերը խորը մխրճվել էին իմ սրտում, և անգամ հիմա էլ՝ այսօր տարիներ անց, ես ցավ եմ զգում, երբ նորից լսում եմ դրանք իմ մտքում», - ասում է Էրիկը:

Հեղինեի ու Էրիկի նման երիտասարդներ շատ կան այսօր, ովքեր վատ հայր են ունեցել: Անկախ այն բանից՝ նրանք սեռական բռնության են ենթարկվել, թե ֆիզիկական, նրանց մտքում «հայր» հասկացությունը խեղված է: Դրական պատկերի փոխարեն «հայր» հասկացությունը նրանց մեջ ամբողջությամբ նույնացվում է դավաճանության, բռնության և ցավի հետ:

Ուրեմն, ինչպե՞ս կարող են նման մարդիկ հաղթահարել «հայր» հասկացության ցավոտ պատկերացումները և մտերիմ անձնական փոխհարաբերություններ զարգացնել Աստծո հետ: Աստված ճշմարտություն է, և մենք պետք է ամուր պահենք ճշմարտությունը և ապրենք ճշմարտության մեջ՝ անկախ խնդիրներից, որոնք մեր անցյալի մի մասն են կազմում:

Եթե դու էլ ես բացասական փոխհարաբերություն ունեցել հորդ հետ, ուրեմն Աստված ուզում է, որ փորձառությամբ հասկանաս, թե ինչ է նշանակում ունենալ սիրող հայր, որ երբևէ չես ունեցել: Նա կլինի քեզ համար այդպիսի հայր:

Աստվածաշունչը լի է համարներով, որոնք նկարագրում են Աստծո հետ ունեցած մարդկանց անձնական փոխհարաբերությունները: Սաղմոս 23-ը գեղեցիկ մի պատկեր է Աստծո մասին՝ որպես մեր հովիվի: Այն գրել է Դավիթը, որը մինչև թագավոր դառնալն ինքն էլ հովիվ էր եղել: Ահա մի քանի տարբերակներ էլ, թե ինչպես է Աստված ուզում քեզ հետ հաղորդակցվել: Այս ցուցակը կարելի է շարունակել:

Նա սիրում է ինձ: Հովհաննես 3:16

Նա ինձ շատ մոտիկից է ճանաչում: Մատթեոս 6:25-34

Նա հոգ է տանում ինձ համար: Երեմիա 33:3

Նա ինձ հետ վերաբերվում է սիրո հարգանքով:

Նա չի ստիպում ինձ, որ ենթարկվեմ Իրեն:

Նա առաջնորդում է ինձ: Հովհաննես 14:26

Նա ինձ ուժ է տալիս, որ հնազանդվեմ Իրեն: Փիլիպպեցիներին 4:13

ա օգնում է ինձ, երբ ես խնդիրներ եմ ունենում: Ա Կորնթացիներին 10:13

Նա մեղմ է: Սաղմոս 86:15

Նա ներում է ինձ, երբ ես սխալվում եմ: Ա Հովհաննես 1:9

Նա համբերատար է: Բ Պետրոս 3:9

Նա դաստիարակում է ինձ, երբ ես չեմ հնազանդվում Նրան:
Եբրայեցիներին 12:5-11

Այս անձնական փոխհարաբերությունների մեջ աճելով՝ մենք պետք է աշխատենք ստեղծել սեփական հասկացողություն և անձնական մտերիմ

հաղորդակցություն: Սա երկու հավասար անձանց փոխհարաբերություն չէ. Նա առաջնորդն է, իսկ մենք՝ հետևորդները:

Բ. Ի՞նչ տեղ ունի հնազանդությունը Աստծո հետ իմ փոխհարաբերության մեջ:

Ի՞նչ է նշանակում առողջ փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ: Այսօրվա մեր աշխարհում խախտված փոխհարաբերությունները, թվում է, ավելի տարածված են, քան առողջ փոխհարաբերությունները: Անգամ հնարավոր է՝ ընտանեկան քառսը քեզ «նորմալ» է թվում:

Ուրեմն, ի՞նչը կարող է քեզ օգնել՝ քո անցյալի «նորմալ» քառսից առաջ գնալ՝ Աստծո հետ մտերիմ անձնական փոխհարաբերություն զարգացնելու համար: Կարևոր բաներից մեկը հասկանալն է, որ կան սահմաններ. դրանք օրենքներն են, որ Աստված դրել է քեզ օգնելու համար:

Եթե դու երկու տարեկան երեխա ունենայիր, սահմաններ կդնեիր քո երեխայի անվտանգությունն ապահովելու համար: Եթե քո երեխան ցանկանար փողոցում խաղալ, դու նրան «ոչ» կասեիր, եթե անգամ երեխադ լաց լիներ: Դու գիտես վտանգի մասին, մինչդեռ երեխան չգիտի:

Ճիշտ նույն ձևով Աստված սահմաններ է դրել քեզ պաշտպանելու համար: Նրա օրենքները չեն գողանում մեր ազատությունը, դրանք ապահով սահմաններ են, որոնց մեջ մենք կարող ենք վայելել այն ազատությունը, որ Աստված ունի մեզ համար:

1. Աստծո օրենքները:

Քանի որ Աստված է Առաջնորդը, մենք պետք է իմանանք, թե ինչ կանոններ է Նա մեզ տվել, որպեսզի ապրենք դրանց համապատասխան: Սա հատկապես կարևոր է նորադարձ քրիստոնյաների համար, քանի որ նրանցից շատերը վարժված չեն ապրելու այնպես, ինչպես Աստված է նրանցից ակնկալում: Աստծո տված օրենքները, որոնց մենք պետք է հնազանդվենք, հստակ գրված են Աստվածաշնչում:

Դրանցից ամենահայտնիները տասը Պատվիրաններն են, որ գրված են Ելից 20-ում: Հազարավոր տարիներ առաջ գրված այս օրենքները դիտարկելիս կտեսնես, որ դրանք այսօր էլ գործնական են: «Մի՛ գողացիր» և «Մի՛ սպանիր» պատվիրանները միայն քրիստոնյաների համար չեն, դրանք նաև երկրի օրենքներ են հանդիսանում:

Առաջին երեք պատվիրանները վերաբերում են Աստծո հետ քո անձնական փոխհարաբերություններին:

Ինչ-որ մեկը հաշվել է Աստվածաշնչի բոլոր օրենքները և պարզել, որ կան 600 օրենքներ: Հին Կտակարանում շատ մարդիկ պարզապես կենտրոնանում էին օրենքների, այլ ոչ թե Աստծո հետ անձնական փոխհարաբերություններ ունենալու վրա: Աստված մեզնից ավելին է ակնկալում, քան ընդամենը «օրենք պահող» լինելը: Նա ուզում է անձնական փոխհարաբերություն ունենալ մեզ հետ: Եվ ձևերից մեկը՝ ցույց տալու համար, որ մենք անձնական փոխհարաբերություն ենք ուզում ունենալ Աստծո հետ, Նրան հնազանդվելն է:

2. Աստծո մեծագույն օրենքները:

Մի անգամ մի մարդ, ով Հին Կտակարանի օրենքների գիտակ էր, մոտեցավ Հիսուսին և հարցրեց Նրան, թե որոնք են Աստվածաշնչի մեծագույն օրենքները:

Մատթեոս 22:35-40.

«Ապա նրանցից մեկը, որ Օրենքի ուսուցիչ էր, փորձելու համար հարցրեց Նրան ու ասաց. «Վարդապե՛տ, Օրենքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ»: Հիսուսը նրան ասաց. «Մի՛րի՛ր Քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով: Սա է առաջին ու մեծ պատվիրանը: Եվ երկրորդը՝ սրա նման. «Մի՛րի՛ր դրացուդ քո անձի պես»: Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և Մարգարեները»:

Հիսուսի պատասխանը մեզ հզոր հիմք է տալիս հասկանալու, թե ինչ է Աստված մտածում Աստվածաշնչի բոլոր օրենքների մասին: Մեծագույն օրենքները կենտրոնանում են Նրա հետ անձնական փոխհարաբերությունների վրա: Հաջողակ քրիստոնյա լինելը կապ չունի քո հարստության, ուժի կամ ընտանեկան փոխհարաբերությունների հետ: Աստծո տեսակետի համաձայն՝ յուրաքանչյուր քրիստոնյա կարող է հաջողակ դառնալ՝ հնազանդվելով Աստվածաշնչի մեծագույն օրենքներին: Տարիքը, իսկալը կամ դրա բացակայությունը ոչ մի կապ չունեն այս օրենքի հետ: Այն ամբողջությամբ սիրո մասին է:

Աստվածաշնչի այս մեծագույն օրենքը մեզ ցույց է տալիս Աստծուն սիրելու և Աստծուն հնազանդվելու միջև եղած փոխադարձ ուժեղ կապը:

Գ. Ինչո՞ւ հնազանդվել Աստծուն:

Հնազանդությունն ու սերը սերտորեն կապված են միմյանց հետ: Նրանք երկուսն էլ մեծ ազդեցություն ունեն իրար վրա: Եթե դու ուզում ես հնազանդվել Աստծուն, պետք է սովորես սիրել Նրան: Միայն Աստծո սիրո վրա հիմնված փոխհարաբերությունների ներսում դու կկարողանաս գտնել Աստծո օրենքին հնազանդվելու փափագն ու զորությունը: Սերն այն հիմքն է, որի վրա կառուցվում է հնազանդությունը: Ինչքան շատ դու Աստծուն սիրես, այնքան քեզ համար հեշտ կլինի Աստծուն հնազանդվել:

Ամեն անգամ, երբ մենք հնազանդվում ենք Նրա օրենքներից որևէ մեկին, մեր գործողություններն ասում են Աստծուն. «Ես Քեզ սիրում եմ»: Աստծո օրենքներին հնազանդվելը սերը պահում է մաքուր և գեղեցիկ: Մերն առանց հնազանդության աղտոտվում է և դառնում եսասեր ու կործանիչ: Մերը դառնում է կիրք, երբ մարդը չի հնազանդվում Աստծուն:

1. Աստված սեր է:

Աստվածաշնչում շատ համարներ խոսում են Աստծո սիրո մասին: Այս սիրո Աստվածը լրջորեն հոգ է տանում ցանկացած մեկի համար, լինի մեծ, թե՛ փոքր:

Երբ մենք որոշում ենք հնազանդվել Աստծուն, որոշում ենք հնազանդվել սիրո Աստծուն: Մենք ավելի ապահով որոշում չէինք կարող կայացնել, քան հնազանդվելն Աստծուն: Նա կատարյալ է: Այս սիրո Աստվածն է մեզ ասել, որ հնազանդվենք Իրեն:

Ա Հովհաննես 3:16.

«Սրանով մենք իմացանք սերը, որ Նա իր կյանքը տվեց մեզ համար. մենք էլ պետք է մեր կյանքը տանք մեր եղբայրների համար»:

Բ Կորնթացիներին 13:11.

«Վերջապես, եղբայրներ՝ ը, ո՛ղջ եղեք: Հաստատ մնացեք, մխիթարվեցե՛ք, միաբան եղեք, խաղաղությամբ վարվեցեք, և սիրո ու խաղաղության Աստվածը ձեզ հետ պիտի լինի»:

2. Աստված սիրում է քեզ:

Հովհաննես 3:16-ը մեզ ասում է, որ Աստված սիրեց ամբողջ աշխարհը, ոչ թե ընդամենը մի քանի հոգու: Աստված քեզ շատ մեծ սիրով է սիրում: Քո անցյալի մեղսալից կյանքը չի խանգարում Նրան՝ սիրել քեզ: Դու առանձնահատուկ ես Նրա համար:

Հովհաննես 3:16.

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

3. Աստված է ասել քեզ, որ սիրես Իրեն:

Աստվածաշնչի կարևորագույն օրենքն է՝ սիրել Աստծուն քո ամբողջ սրտով, մտքով, հոգով ու զորությամբ (տե՛ս Մատթեոս 22:37 և Մարկոս 12:30): Մեկ այլ խոսքով՝ մենք պատվեր ունենք սիրել Աստծուն մեր ողջ էությանբ: Մենք Աստծուն պետք է սիրենք ավելի, քան որևէ այլ անձնավորության:

Հիսուսը Հովհաննես 14:15-ում խոսում է սիրո և հնազանդության միջև եղած կապի մասին.

«Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցե՛ք»:

Հիսուսն ասում է, որ եթե դու սիրում ես Աստծուն, ապա կհնազանդվես Նրան: Եթե դու չես հնազանդվում Աստծուն, սա ցույց է տալիս, որ դու չես սիրում Աստծուն: Եթե դու չես սիրում Աստծուն, քեզ համար անհնարին կլինի Նրա օրենքներին հնազանդվելը:

Դ. Ինչպե՞ս կարող եմ ես հնազանդվել Աստծո մեծագույն օրենքին:

1. Ինչպե՞ս սկսեմ սիրել Աստծուն:

Ինչպե՞ս կարող ես հնազանդվել Աստծո մեծագույն օրենքին: Ի՞նչ կարող ես անել՝ ցույց տալու Աստծուն, որ սիրում ես Նրան: Բազմաթիվ գործնական ձևեր կան, թե ինչպես կարող ես Աստծուն ցույց տալ, որ սիրում ես Նրան: Ստորև բերված են այդ ձևերից մի քանիսը: Միգուցե դու ցանկանայիր ավելացնել քո սեփական մտքերից էլ: Կարդա՛ Ա Կորնթացիներին 13-ը, որպեսզի տեսնես ավելի շատ ձևեր քո սերն արտահայտելու համար: Ամեն օր Աստվածաշունչ կարդալիս ուշադրությո՛ւն դարձրու Աստվածաշնչի այն մարդկանց օրինակներին, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են նրանք Աստծուն սիրել իրենց հնազանդության միջոցով:

1. Հնազանդվի՛ր Աստծո օրենքներին:
2. Հնազանդվի՛ր Աստծո օրենքների հետևում գտնվող սկզբունքներին:
3. Տո՛ւր Աստծուն քո անձնական իրավունքները:
4. Արա՛ այն, ինչ Աստված ուզում է, որ դու անես:
5. _____
6. _____
7. _____
8. _____

Մեր կյանքի առօրյայում պետք է փորձենք գտնել պարզ և գործնական ձևեր՝ Աստծուն ցույց տալու համար, որ մենք սիրում ենք Նրան: Հնարավորություննե՛ր քո փնտրիչ ճաշի ժամին, աշխատանքի վայրում, դասարանում, հանգստի ժամին, ազատ ժամանակ և երբ եկեղեցում ես:

Ղուկաս 6:27-38-ում կան մի քանի ձևեր՝ սերը գործնականորեն ցույց տալու համար: Դու կարող ես քննարկել, թե ինչպես սկսես քո կյանքում փորձել այս ձևերից որոշները: Ահա մի քանիսն էլ, որ բերված են նորադարձ քրիստոնյաների դասարաններից մեկից:

1. Աստծուց խորհո՛ւրդ հարցրու:
2. Նրանից օգնությո՛ւն խնդրիր:
3. Երկրպագի՛ր Նրան:
4. Մտածի՛ր այն մասին, որ Աստված քեզ հետ է:
5. Աստվածաշնչյան վերաբերմո՛ւնք դրսևորիր:
6. Տո՛ւր Աստծուն:

Կարևոր միտքն այստեղ այն է, որ գտնես քո ձևը, որպեսզի սովորես սիրել Աստծուն: Աստծո հետ խորը, անձնական փոխհարաբերություններ զարգացնելը կարող է ժամանակ տանել, սակայն շարունակի՛ր աշխատել դրա վրա:

2. Ի՞նչ անեմ, եթե ուժ չունեմ Աստծուն հնազանդվելու:

Դու կարող ես ասել. «Ես ուժ չունեմ Աստծուն սիրելու և Նրա պատվիրաններին հնազանդվելու համար: Ես չափազանց թույլ եմ»: Սակայն Աստված քեզից լավ գիտի քո թուլությունները, մինչդեռ շարունակում է քեզ սիրել: Նա քեզ երկու հատուկ խոստումներ է տվել:

Բ Տիմոթեոս 1:7.

«Որովհետև Աստված մեզ երկշտության հոգի չի տվել, այլ՝ զորության, սիրո և զգաստության»:

Բ Կորնթացիներին 12:9.

«Եվ Նա ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բավական է, որովհետև Իմ զորությունը սկարության մեջ է կատարյալ դառնում»: Հետևաբար ժամ առաջ իմ սկարություններով ուրախությամբ կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվի իմ մեջ»:

Այս երկու խոստումները քեզ մեծ հույս են տալիս: Եթե ասես՝ «Ես չեմ կարողանում սիրել այդ անձնավորությանը», կամ՝ «Ես չեմ կարողանում սիրել Աստծուն», մի՛ անհանգստացիր: Աստված քեզ սեր կտա, որպեսզի դու կարողանաս սիրել Նրան և մարդկանց: Իրականում Բ Տիմոթեոս 1:7-ը դա ներկայացնում է որպես անցյալի քայլ. Աստված քեզ արդեն տվել է այս պարզները:

Բ Կորնթացիներին 12:9-ի խոստումը խոսում է նրանց հետ, ովքեր խնդիրների են հանդիպել, նրանց հետ, ովքեր թույլ են: Աստված խոստանում է տալ քեզ պետք եղած զորությունը. սիրելու զորություն և զորություն քո կյանքի բոլոր ասպարեզներում: Սակայն Աստծուն հնազանդվելու համար ավելին է պետք, քան զորությունը: Անձնական ցանկություն է պետք հնազանդվելու համար, այն գալիս է քո ներսից՝ սրտի ամենախոր տեղից:

3. Ի՞նչ անեմ, եթե ես Աստծո հանդեպ սեր չեմ զգում:

Մեր այսօրվա աշխարհում սերը հաճախ բնութագրվում է որպես զգացմունք: Գուցե դու լսել ես, թե ինչպես է մի քրիստոնյա ասում. «Ես այնքան սեր եմ զգում Հիսուսի հանդեպ: Ինձ թվում է՝ սիրտս հիմա կպայթի»: Կարո՞ղ ես դու էլ նույնն ասել, թե՞ ուրիշ բան ես զգում: Դու, թերևս, նայում ես այդ անձնավորությանն ու ինքդ քեզ ասում. «Ինչ տարօրինակ մարդ է»:

Կամ գուցե դու մի ժամանակ քեզ Աստծուն մոտ էիր զգում, բայց հիմա այդ զգացմունքներն անցել են: Գուցե դու մի առավոտ վեր ես կացել, և քո ամբողջ ոգևորվածությունն անցել է:

Աստվածաշնչի ամենամեծ պատվիրանը քեզ չի պատվիրում որոշակի զգացմունքներ ունենալ: Մերն ավելին է, քան որևէ զգացմունք, դա որոշում է, նվիրում: Իսկական սերը որոշվում է ոչ այնքան զգացմունքներով, ինչքան գործողություններով: Իսկական սերը երևում է սիրո գործողություններից, որ գալիս է անկեղծ սրտից:

Շատ քրիստոնյաներ իրոք դժվարանում են սիրել մի Աստծու, որին չեն տեսնում: Աստծուն սիրել սովորելու համար նախ պետք է սովորել հնազանդվել Աստծուն: Հնազանդության հասարակ քայլերով դու կսկսես փոփոխություններ տեսնել քո սրտում և կսկսես սեր զգալ Աստծո հանդեպ: Մերը քո փոխհարաբերությունների մեջ կարող է արագ գալ, սակայն Աստծո հանդեպ սիրո զգացմունքները՝ դանդաղ գալ:

Միշտ հիշի՛ր, զգացմունքները գալիս և գնում են: Սակայն դա չի նշանակում, որ սերը գալիս ու գնում է հենց այն պատճառով, որ զգացմունքները փոփոխվում են: Անգամ այն ժամանակ, երբ սիրո զգացմունքներն անցել են, դու կարող ես քո սրտում որոշել և ասել. «Ես որոշել եմ սիրել Աստծուն և դա ցույց տալ իմ գործողություններով»:

Եթե դու Աստծուն հնազանդվես միայն այն ժամանակ, երբ զգում ես, որ ուզում ես հնազանդվել, ապա լուրջ խնդիրներ կունենաս: Աստծուն հնազանդվելու որոշումը պետք է գա սրտից, սրտի ամենախորը նվիրվածությունից, այն է՝ հնազանդվել Աստծուն անկախ այն բանից, թե ինչ ես զգում:

Եվ մի բան էլ. երբ ինչ-որ մեկին սիրում ես, ուզում ես խոսել նրա հետ: Օրվա ընթացքում ինչքան շատ խոսես Աստծո հետ, այնքան լավ կճանաչես Նրան և այնքան շատ սեր կզգաս Նրա հանդեպ:

Ե. Ի՞նչ տեղ ունեն դրդապատճառներն Աստծուն հնագանդվելու մեջ:

Երբ փոքրիկ երեխան սկսում է սովորել հնագանդության մասին, նա դեռևս շատ փոքր է, որպեսզի հասկանա, թե ինչ է դրդապատճառը: Երեխային սովորեցնում են հնագանդվել, քանի որ «ծնողն է այդպես ասում»: Ծնողները կանոններ են դնում և ստիպում են դրանց կատարումը, քանի որ ուզում են պաշտպանել իրենց երեխային:

Սակայն երբ երեխան մեծանալով դառնում է չափահաս, հնագանդության նոր մակարդակի կարիք է առաջանում: Չափահաս երեխան պետք է սովորի տեսնել կանոնների հետևում եղող արմատական պատճառները և իր արձագանքն այդ կանոններին: Արդեն չափահաս երեխան պետք է որոշումներ կայացնի, որոշումներ, որոնք կապ ունեն դրդապատճառների հետ:

Աստված ուզում է, որ դու հնագանդվես Իրեն, և խոստացել է քեզ ուժ տալ, որի կարիքը ունես դա անելու համար: Սակայն Նա քեզ չի ստիպի, որ հնագանդվես: Դո՛ւ պետք է որոշես: Այսպիսով, ի՞նչը քեզ կօգնի՝ ճիշտ որոշումներ կայացնել: Քո դրդապատճառները:

1. Ի՞նչ է դրդապատճառը:

Մենք հաճախ ենք լսում «դրդապատճառ» բառը, բայց ի՞նչ է այն իրականում նշանակում: Ահա մի քանի անձնական պատասխաններ, որ մարդիկ տվել են: Միգուցե դու էլ ունենաս մի բան՝ այստեղ ավելացնելու:

1. Նպատակ:
2. Հիմնական պատճառը, թե ինչու ես դու ինչ-որ բան անում:
3. Փափագ:
4. Մի ուժ կամ գաղափար, որ քեզ մղում է ինչ-որ բան անել:
5. Գործողության հետևում եղած միտքը:

Մարդիկ կարող են տարբեր դրդապատճառներ ունենալ իրենց բոլոր գործողությունների հիմքում, այլ ոչ՝ միայն իրենց հնագանդության քայլերը: Մարդու համար դրդապատճառ կարող է հանդիսանալ վախը, մեղքի զգացումը կամ պարտականության զգացումը: «Ես պարտավոր եմ», օրինակ, երբ պետք է հետ վճարեմ, կամ մանիպուլյացիա՝ աճապարարություն անեմ: Կարող են լինել նաև շատ դրական դրդապատճառներ՝ բարություն, հոգատարություն, պատասխանատվություն, սեր, կարեկցանք, գնահատանք, կամ, պարզապես, տալու ուրախություն:

2. Ո՞րն է Աստծուն հնազանդվելու իմ դրդապատճառը:

Այսպիսով, ո՞րն է Աստծուն հնազանդվելու քո դրդապատճառը: Դժոխք գնալու վա՞խը: Դա կարող է քեզ առաջ մղել մի կարճ ժամանակ: Դու, եթե ուզում ես մնալ Հիսուսի սիրո մեջ, կարիք ունես ավելի լավ դրդապատճառ ունենալու, քան դժոխքի վախն է:

Ի՞նչը քեզ կբերի այնտեղ, որտեղ դու կկարողանաս ասել. «Ես ուզում եմ հնազանդվել Աստծուն»: Աստծուն հնազանդվելու լավագույն դրդապատճառը սիրո դրդապատճառն է:

Սակայն ինչպե՞ս կարող ես իմանալ՝ արդյոք ինչ-որ մեկի տվյալ գործողությունը սիրո քայլ է, թե՞ մանիպուլյացիայի: Պատասխանը «քո դրդապատճառն» է: Այն գործողությունը, որ սիրո քայլ է, միշտ ունի դրդապատճառ՝ սեր ցույց տալու:

Երկու մարդ կարող են միևնույն բանն անել, սակայն տարբեր դրդապատճառներ ունենալ: Նույն գործողությունը մի դեպքում կարող է լինել սիրո քայլ, իսկ մյուս դեպքում՝ եսասիրության: Հիմնական տարբերությունը տվյալ անձնավորության դրդապատճառն է:

Մեզնից ամեն մեկը որոշում է իր դրդապատճառները: Հնարավոր է՝ անցյալում դու ինչ-որ բաներ արել ես սխալ դրդապատճառներով: Հիմա Աստծո օգնությամբ դու կարող ես սկսել հնազանդվել Աստծուն, քանի որ ցանկանում ես սեր ցույց տալ Նրան:

Առակաց 21:2.

«Մարդու բոլոր ճամփաներն իրեն ուղիղ են թվում, բայց Տերը կշռում է սրտերը»:

Առակաց 20:27.

«Մարդու հոգին Տիրոջ ճրագն է, քննում է սրտի բոլոր խորքերը»:

Այս երկու համարները մեզ պարզորոշ ցույց են տալիս, որ Աստված միշտ տեղյակ է մեր դրդապատճառներից: Մենք կարող ենք ծածկել մեր դրդապատճառները մարդկանցից, բայց ոչ Աստծուց: Այսօրվա մեր խնդիրն է՝ հասկանալ, թե որոնք են Աստծո հետ մեր նոր փոխհարաբերության նշանները: Կդառնա՞ սերը մեր դրդապատճառը: Աստծուն հնազանդվելը կդառնա՞ մեր սրտի փափագը:

Աստծուն ճանաչելն ավելի կարևոր է, քան Նրան հնազանդվելը: Սակայն դա արդեն Աստծո հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու մեկ այլ ելակետ է:

Ինչպե՞ս են մեր վերաբերմունքներն ազդում Աստծուն հնազանդվելու մեր կարողության վրա: Սա հաջորդ գլխի հիմնական թեման է:

Գլուխ 2

Վերաբերմունքներ և հնագանդություն

Մենք քննարկեցինք, թե ինչու պետք է հնագանդվենք Աստծուն: Տեսանք, որ Աստծո ամենամեծ օրենքը կենտրոնանում է սիրո վրա: Հիմա ավելի մանրամասն դիտարկենք, թե ինչպես են մեր վերաբերմունքներն ազդում մեր վարքի վրա:

Այս գլխի հիմնական միտքն այն է, որ մենք պետք է հնագանդ վերաբերմունք ունենանք Աստծո հանդեպ, եթե ուզում ենք շարունակաբար հնագանդվել Նրան: Ուրեմն, ինչպե՞ս կարող ես իմանալ, թե արդյոք ունե՞ս հնագանդ վերաբերմունք Աստծո հանդեպ:

Դու ավելի հեշտ կտեսնես այդ վերաբերմունքները, եթե սկզբում անդրադառնաս այն բանին, թե այսօր ինչպես ես քո կյանքում արձագանքում մարդկանց՝ հատկապես քո ղեկավարների ու ավագների այս կամ այն մոտեցմանը: Եթե նկատում ես, որ մարդկանց հանդեպ անհնագանդ վերաբերմունք ունես, ապա պետք է ավելի ուշադիր լինես, որպեսզի տեսնես, թե արդյո՞ք նույն խնդիրը չունես Աստծո հետ քո փոխհարաբերության մեջ:

Այս նյութը կարող էր ընդհանրացվել մեր բոլոր առաջնորդների՝ թե՛ Աստծո, թե՛ երկրավոր առաջնորդների առումով: Սակայն մեր հիմնական կիզակետը տեսնելն է, թե ինչպես են Աստծո օրենքների հանդեպ ունեցած մեր վերաբերմունքներն ազդում Նրա օրենքների հանդեպ մեր հնագանդության վրա:

Ա. Ստուգի՛ր այն վերաբերմունքները, որոնք հեշտացնում են Աստծուն չհնագանդվելը:

Վերաբերմունք նշանակում է՝ մտածելակերպ, կարծիք, մտածելու ուղղություն:

Պատճառներից մեկը, թե ինչու են մարդիկ դժվարանում հնագանդվել Աստծուն, այն է, որ նրանք սխալ վերաբերմունք ունեն Նրա հանդեպ: Դու կարող ես հարցնել. «Ի՞նչ կապ ունեն իմ վերաբերմունքներն Աստծուն հնագանդվելու իմ կարողության հետ»: ՇԱ՛Տ ՄԵԾ: Թե ինչ ես դու մտածում Աստծո մասին՝ մեծապես կազդի այն բանի վրա, թե ինչպես կհնագանդվես Նրան:

Ստուգի՛ր ինքդ քեզ՝ տեսնելու համար, թե արդյոք ունե՞ս Աստծո հանդեպ հետևյալ վերաբերմունքները.

_____ Քննադատական վերաբերմունք

_____ Ընթուստ վերաբերմունք

_____ Երախտամոռ վերաբերմունք

_____ Ծույլ վերաբերմունք

_____ Նեղացկոտ վերաբերմունք

_____ Կամակոր վերաբերմունք

Ինչպե՞ս է երևում, թե արդյոք մարդն ունի՞ իր կյանքում այս վերաբերմունքներից մեկը կամ մի քանիսն Աստծո հանդեպ: Տարբեր կերպ. Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես անում, ինչպե՞ս ես արձագանքում, երբ Աստված քեզ ասում է, որ ինչ-որ բան անես, և այլն:

Այս վերաբերմունքները մեր կյանքում դրսևորվում են, երբ մենք հանդիպում ենք իրավիճակների, որոնք կապված են Աստծո օրենքներից որևէ մեկի հետ: Օրինակ, եթե դու փորձվում ես գողության համար, քո արձագանքը կորոշվի նրանով, թե ինչ վերաբերմունք ունես տվյալ իրավիճակի հանդեպ:

Ենթադրենք՝ խանութի մենեջերը հենց նոր վատ վերաբերմունք ցույց տվեց քո մոր հանդեպ, երբ վերջինս նրան դիմել էր ինչ-որ ապրանք գտնելու հարցով: Քո ներսում նեղվածություն է առաջանում մենեջերի հանդեպ՝ քո մոր հետ վատ վերաբերվելու պատճառով: Աչքովդ են ընկնում մի քանի խոշոր դեղձեր, և միանգամից միտք է առաջանում. «Զգողանա՞մ սրանցից մեկ-երկու հատ ու վատություն անեմ այդ տհաճ մենեջերին»:

Եթե դու թույլ տաս, որ նեղացկոտ վերաբերմունքը որոշի քո արձագանքը, ապա կգողանաս այդ դեղձերը: Այդ արձագանքի հակառակը կլինի՝ ներող վերաբերմունք ունենալ մենեջերի հանդեպ և արագ հեռացնել գողանալու միտքը՝ որպես վատ վարքի դրդապատճառ:

Սավուղ թագավորն ու նրա ընթուստ վերաբերմունքը:

Ա Թագավորաց 15-ում նկարագրվում է Սավուղ թագավորի ու նրա ընթուստ վերաբերմունքի մասին: Ինչպե՞ս են նրա վարքն ու խոսքերը բացահայտում նրա անհնազանդ վերաբերմունքը: Աստված շատ հստակ ցույց է տալիս, թե ինչ է մտածում անհնազանդ վերաբերմունքների մասին:

Ա Թագավորաց 15:22-23.

«Սամուելն ասաց. «Մի՞ թե Տերն ավելի հաճույք է ստանում ողջակեզներից ու գոհերից, քան Տիրոջ ձայնին հնազանդվելուց: Ահա, հնազանդությունը գոհաբերությունից ավելի լավ է, ու անսալը՝ խոյերի ճարպից: Քանի որ ապստամբելը կախարդության մեղքի պես է, և կամակորությունը կռապաշտության պես չարագործություն է: Քանի որ դու մերժեցիր Տիրոջ խոսքը, Նա էլ քեզ մերժեց՝ որպես Իսրայելի թագավոր»:

Աստված ապստամբ վերաբերմունքը տեսնում է նույնքան վատ, որքան կախարդության մեղքը: Նա կամակոր վերաբերմունքը՝ որպես սխալ, տեսնում է նույնքան լուրջ, որքան կռապաշտությունը:

Դու կարող ես հարցնել. «Ինչպե՞ս կարող եմ ազատվել այս վերաբերմունքներից»: Պատասխանը պարզ է, բայց ոչ հեշտ: Սխալ վերաբերմունքները փոխարինի՛ր հնազանդ վերաբերմունքներով:

Տե՛ս *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի՝ *Վերաբերմունքներ* բաժինն ավելի շատ տեղեկություն ստանալու համար, այն, թե ինչպես ազատվես սխալ վերաբերմունքներից և ինչպես նոր վերաբերմունքներ զարգացնես:

Բ. Զարգացրո՛ւ հնազանդ վերաբերմունքներ:

Աստծուն հնազանդվել սովորելու ամենակարևոր հանգամանքներից մեկը հնազանդության վերաբերմունք զարգացնելն է: Փիլիպպեցիներին 2:5-ը մեզ ասում է, որ մենք պետք է ունենանք Քրիստոսի վերաբերմունքները: Նա հնազանդ եղավ մինչև տառապալից մահվան աստիճանը՝ խաչվելը: Նոր Կտակարանի առաջին չորս գրքերը կարդալիս դու տեսնում ես, թե ինչպես է Հիսուսը հնազանդությամբ արձագանքում իրավիճակներին, որը շատ հզոր ձևով խոսում է նրա հնազանդ վերաբերմունքի մասին: Աստծուն հաճեցնելու Նրա փափագն իրոք ամենակարևորն էր Իր կյանքում:

Հովհաննես 5:19-20.

«Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ Որդին Ինքն Իրենից ոչինչ չի կարող անել, այլ՝ ինչ տեսնում է Հորն անելիս, որովհետև, ինչ բաներ, որ Նա է անում, այդպես էլ Որդին է անում նույն ձևով: Որովհետև Հայրը սիրում է Որդուն և ամեն բան, ինչ Ինքն անում է, ցույց է տալիս Նրան, և սրանցից ավելի մեծ գործեր է ցույց տալու Նրան, որ դուք զարմանաք»:

Երբ մենք հնազանդ վերաբերմունք ենք ունենում, շատ ավելի հեշտ է լինում Աստծո օրենքներին հնազանդվելը: Հնազանդ վերաբերմունք զարգացնելը կարող է ժամանակ պահանջել: Քո կյանքում հնազանդ վերաբերմունք ձևավորելու

ամենահզոր ձևը, կարծում եմ, համարներ անգիր անելն է, որոնք վերաբերում են այդ թեմաներին:

Ի՞նչ տեսակի հնազանդ վերաբերմունքներ ունենալու են Հիսուսն Իր կյանքում: Նա ցանկանում է, որ մենք այսօր այդ նույն վերաբերմունքները զարգացնենք մեր կյանքում:

1. Հարգալից վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է հարգալից վերաբերմունքը:

- 1) Հարգալից նշանակում է պատիվ տալ սիրո հետ միախառնված: Իմ Աստծուն պատիվ տալը միախառնված է սիրո հետ: Ա Պետրոս 2:18
- 2) Մեծարանք. ես մեծարում եմ Աստծուն: Ես հարգանքով եմ նայում Աստծուն: Ես Նրան պատիվ եմ տալիս:

Բ. Ինչպե՞ս կարող եմ հարգալից վերաբերմունք զարգացնել:

- 1) Ես հասկանում եմ, որ Աստված իմ կյանքում գործում է իմ առաջնորդների միջոցով:

Եբրայեցիներին 13:17.

«Լսեցե՛ք ձեր առաջնորդներին և հնազա՛նդ եղե՛ք նրանց, որովհետև նրանք հսկում են ձեր հոգիների համար՝ որպես մարդիկ, որ հաշիվ պիտի տան, որպեսզի ուրախությամբ գործեն և ոչ թե վշտով, քանի որ դա անօգուտ կլինի ձեզ համար»:

- 2) Ես գիտակցում եմ, որ Աստված օգտագործում է իմ առաջնորդներին, որպեսզի ինձ դարձնի այնպիսին, ինչպիսին Ինքն է ուզում, որ ես լինեմ:

Առակաց 21:1.

«Թագավորի սիրտը Տիրոջ ձեռքում է՝ ինչպես ջրի վտակները. Նա ո՛ր կողմը կամենա, այն կողմ էլ կշրջի այն»:

- 3) Ես իմ առաջնորդներին նայում եմ որպես «Աստծո ձեռքերի»՝ ինձ առաջնորդելու և ուղղորդելու համար:

2. Ծառայի վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է ծառայի վերաբերմունքը:

- 1) Հասկանալ, որ ես չեմ իմ դեկավարը:
- 2) Ես գիտակցում եմ, որ իրականում ծառայում եմ Աստծուն, երբ գործում եմ իմ առաջնորդների համար:

Կողոսացիներին 3:23.

«Եվ ինչ որ անեք, սրտա՛նց արեք՝ որպես թե Տիրոջ համար և ոչ թե մարդկանց»:

- 3) Սա նշանակում է, որ ես ամեն բան անում եմ Աստծուն հաճեցնելու համար՝ հատկապես Աստծուն և իմ առաջնորդներին հնազանդվելիս:

Բ. Ինչպե՞ս պետք է ծառայի վերաբերմունք զարգացնեմ:

- 1) Ես կամավոր կերպով ենթարկվում եմ Աստծուն և իմ առաջնորդներին և հնազանդվում եմ նրանց:

Ա Պետրոս 2:18.

«Ծառանե՛ր, վախով հնազա՛նդ եղեք ձեր տերերին՝ ո՛չ միայն բարիներին և հեզերին, այլև դաժաններին»:

- 2) Ես մտնում եմ Աստծո պաշտպանության տակ:
- 3) Ես աշխատում եմ մյուսներին էլ հաջողակ դարձնել, հատկապես իմ առաջնորդներին: Ես ոգևորվում եմ այս հարցում և իրական ուրախություն եմ գտնում սա անելիս:
- 4) Ես չեմ փորձում անել Աստծո գործը: Ես չեմ փորձում վերցնել Նրա պատասխանատվությունները:

3. Երախտագետ վերաբերմունք (շնորհակալ վերաբերմունք):

Ա. Ի՞նչ է երախտագետ վերաբերմունքը:

- 1) Շնորհակալ լինել Աստծուն, որ Նա իմ Առաջնորդն է:
- 2) Անկեղծորեն երջանիկ լինել և գնահատել, որ Աստված գործում է, որպեսզի ինձ դարձնի այն անձնավորությունը, ինչ Նա է ուզում:

Բ. Ինչպե՞ս կարող եմ երախտագետ վերաբերմունք զարգացնել:

- 1) Ես պետք է սովորեմ երջանիկ լինել այն բանի համար, որ Աստված իմ Ղեկավարն է: Ամեն օր շնորհակալություն ևն հայտնիք Աստծուն, որ դու Նրա զավակն ես:

Ա Թեսաղոնիկեցիներին 5:18.

«Ամեն ինչում գոհություն մատուցե՛ք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով»:

- 2) Անկեղծ գնահատա՛նք հայտնիք Աստծուն ամեն օր: Շնորհակալություն ևն հայտնիք Նրան ամեն անգամ, երբ Նա օգտագործում է մարդկանց՝ քեզ խորհուրդ տալու կամ ուղղելու համար:
- 3) Քո բոլոր ակնկալիքները հանձնի՛ր Աստծուն: Կազմի՛ր ցուցակ այն ամենի վերաբերյալ, որոնք դու ակնկալում ես, որ Աստված անի քեզ համար: Հետո աղոթի՛ր և այդ բոլոր ակնկալիքները հանձնի՛ր Աստծուն:

4. Լուռ վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է լուռ վերաբերմունքը:

- 1) Դա շատ պարզ է: Սովորի՛ր հանդարտ լինել: Սովորի՛ր լուռ լինել խոսելու երկու ասպարեզներում. 1) Ինչքա՛ն ես ասում: 2) Ինչքա՛ն բարձր ես ասում ասելիքդ:
- 2) Սովորի՛ր *ներքուստ* լուռ լինել, ինչպես նաև՝ արտաքուստ:
- 3) Սովորի՛ր խաղաղության մեջ լինել Աստծո հետ:

Ա Պետրոս 3:4.

«Այլ թող լինի սրտում թաքնված մարդը հեզ ու հանդարտ հոգու անեղծանելի զարդով, որ Աստծո առաջ խիստ պատվական է»:

Այս համարն ուղղված է կանանց՝ իրենց ամուսինների հանդեպ վերաբերմունքի առումով: Ամեն դեպքում այս սկզբունքը՝ զարգացնել լուռ վերաբերմունք, օգտակար է ցանկացած մարդու համար: Աստված սա շատ թանկ է գնահատում:

Բ. Ինչպե՞ս կարող եմ լուռ վերաբերմունք զարգացնել:

- 1) Ես պետք է սովորեմ հնագանդվել Աստծուն՝ առանց նախապես Նրա բոլոր պատճառներն իմանալու: Ես պետք է հնագանդվելու համար պատրաստակամ լինեմ պարզապես այն պատճառով, որ Աստված է ինձ ասել:
- 2) Վստահեմ Աստծուն, որ Նա կարող է գործել իմ առաջնորդների միջոցով և իմ կյանքում կանխ այն, ինչ Ինքն է ուզում: Ես վստահում եմ, որ Աստված կարող է սա անել, եթե անգամ իմ առաջնորդները սխալվեն և սխալ բաներ անեն: Հիսուսն այսպես արձագանքեց.

Ա Պետրոս 2:23.

«Նախատվեց, բայց փոխարենը չնախատեց, չարչարվեց, բայց չսպառնաց, այլ Իրեն հանձնեց Նրան, ով արդարությամբ է դատում»:

- 3) Ես չեմ վիճում Աստծո հետ:
- 4) Ես հնագանդվելուց առաջ բացատրություն չեմ պահանջում, թե ինչո՞ւ պետք է ինչ-որ բան անեմ:

Հիսուսի կյանքն ուսումնասիրելիս դու կտեսնես, որ Նա Իր կյանքում զարգացրել էր այս հնագանդ վերաբերմունքները: Նա ցույց տվեց այս վերաբերմունքներն Աստծո և Իր երկրավոր առաջնորդների հետ Իր փոխհարաբերությունների մեջ: Կան նաև հնագանդության այլ վերաբերմունքներ, որոնք կարող էին գրվել այստեղ, սակայն սրա՞նք կարող են քեզ լավ սկիզբ տալ:

Վերը նշված՝ հնագանդության չորս վերաբերմունքները զարգացնելու վրա աշխատելիս դու կտեսնես, որ Աստծուն հնագանդվելն ավելի հեշտ է դառնում: Այդ ընթացքում դու նաև կտեսնես, որ կարողանում ես քո կյանքից դուրս մղել անհնագանդության վերաբերմունքները: Հարցն այն է, թե ինչ կա քո սրտում: Դու ուզո՞ւմ ես հնագանդվել Նրան: Եթե դու իրոք ուզում ես հնագանդվել Նրան, Նա կօգնի:

Այս հնագանդության վերաբերմունքները խոսում են մեկ այլ բանի մասին էլ. դրանք վերաբերում են գիտակցական հնագանդությանը: Ճշմարիտ հոգևորությունը կույր հնագանդությունը չէ՝ հնագանդվել առանց մտածելու: Հիսուսը կատարելապես հնագանդ էր Իր Հորը և Նրա օրենքներին: Նա որոշել էր այդպես անել: Նրա կյանքը կարող էր բնութագրվել որպես գիտակցական հնագանդության կյանք: Իմաստուն մարդիկ կհետևեին Հիսուսի օրինակին:

Գլուխ 3

Ո՞ր օրենքներին ես պետք է հնազանդվեմ

Եթե դու ուզում ես տաք վիճաբանություն սկսվի, ապա տո՛ւր ներքևում գրված երեք հարցերը: Մի՛ գարնացիր, եթե քրիստոնյաները իրարից լրիվ տարբեր կարծիքներ ունենան այս երեք հարցերի վերաբերյալ:

1. Պե՞տք է քրիստոնյաները հնազանդվեն Աստծո բոլոր օրենքներին, որոնք գրված են Նոր Կտակարանում:
2. Պե՞տք է քրիստոնյաները հնազանդվեն Աստծո բոլոր օրենքներին, որոնք գրված են Հին Կտակարանում:
3. Պե՞տք է քրիստոնյաները հնազանդվեն Աստծո բոլոր օրենքներին, որոնք գրված են Աստվածաշնչում: Ինչպե՞ս ես դու կողմնորոշվում. ո՞ր օրենքներին հնազանդվել և ո՞ր օրենքներն անտեսել:

Այս վերջինը հատկապես որոշ դժվարին հարցեր է առաջացնում: Դու իրո՞ք պետք է ընտրես, թե որ օրենքներին հնազանդվես: Որտե՞ղ է Աստված ասում, որ մենք կարող ենք Աստվածաշնչի որոշ օրենքներ անտեսել:

Եթե դու ընտրես այն դիրքորոշումը, որ մենք պետք է հնազանդվենք Աստծո բոլոր օրենքներին, ապա կարդա՛ Հին Կտակարանի հետևյալ օրենքները: Դու հնազանդվո՞ւմ ես այս օրենքներին: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

Ղևտացիներին 11:26-27.

«Այն բոլոր անասունների դիակները, որ կճղակավոր են, բայց կճղակը ճեղքված չէ և չեն որոճում, անմաքուր են ձեզ համար. նրանց դիպչողը անմաքուր լինի: Եվ բոլոր չորքոտանի անասուններից իրենց թաթերի վրա քայլողները բոլորը անմաքուր են ձեզ համար. նրանց դիակներին դիպչողը մինչև երեկո անմաքուր կհամարվի»:

(Սա վերաբերում է շատ կենդանիների՝ ներառյալ կատուներին, շներին ու ճագարներին):

Ղևտացիս 20:9-10.

«Ով իր հորը կամ մորն անիծի, անպայման կմեռնի. Նա իր հորը կամ մո՛րն է անիծել. նրա արյունն իր վրա թող լինի: Եվ ով որ մի ուրիշ մարդու կնոջ հետ

շնությունն անի, իր դրացու կնոջ հետ շնությունն անողն անպայման կմեռնի, ինչպես շնացողը, այնպես էլ շնացող կինը»:

Բ Օրինաց 23:12-13.

«Նաև բանակից դուրս մի տեղ ունենաս, որ այնտեղ պետքի համար դուրս գնաս: Եվ քո զենքերի հետ մի բահ էլ ունենաս, որ դուրսը պետք ունենալու համար նստելու լինես, դրանով փորես և դարձյալ քո կեղտը դրանով ծածկես»:

Ա. Աստծո օրենքների դասակարգումները:

Աստվածաշնչում կան տարբեր տեսակի օրենքներ: Այդ օրենքներից որոշները հեշտությամբ կարող են դրվել խոշոր դասակարգումների մեջ: Ահա չորս խոշոր դասակարգումներ: Որոշ օրենքներ համընկնում են մեկից ավելի դասակարգումների հետ:

1. Առողջության օրենքներ
2. Քաղաքացիական, կառավարական օրենքներ Իսրայելի ժողովրդի համար
3. Կրոնական օրենքներ
4. Բարոյական օրենքներ

Օրենքների այս չորս խմբերը համեմատաբար պարզ են թվում, սակայն, իրականում, որոշ օրենքներ հեշտությամբ կարող են համընկնել միանգամից երկու դասակարգումների հետ: Վերջին խումբը՝ բարոյական օրենքները, նույնպես խնդիր է: Իրականում Աստվածաշնչի ցանկացած օրենք կապված է բարոյականության հետ: Այս չորս դասակարգումներն արված են մարդկանց կողմից: Դու Աստվածաշնչում մեկ համար նույնիսկ չես գտնի, որը կբաժաներ օրենքներն ըստ այս չորս դասակարգումների:

Այնուամենայնիվ, դրանք ավելի հանգամանալից դիտարկելու համար կարող է օգտակար լինել այս օրենքները չորս խոշոր դասակարգումների բաժանելը:

1. Առողջական օրենքներ:

Հին Կտակարանի Ելից, Ղևտացիս, Թվոց և Բ Օրինաց գրքերը լի են տարբեր օրենքներով, որոնք ուղղակիորեն վերաբերում են առողջության պահպանմանը: Բ Օրինաց 23:12-13-ը, որ մեջբերված է վերևում, դրանցից մի օրինակ է: Այս օրենքներից շատերը նաև մանրակրկիտ ցուցումներ են առ այն, թե ինչպես վերաբերվել տարբեր տեսակի հիվանդությունների դեպքում: Բժիշկ Ս. Ի. Մաք Միլլենը մի հրաշալի գիրք է գրել. «*None Of These Diseases*» (Flemming H. Revell Publ. Co.): Նա բացատրում է Հին Կտակարանի օրենքների բժշկական ճշգրտությունը: Դու կարող ես կարդալ այդ գիրքը և տեսնել, թե ինչքանով են այս օրենքներն այսօր բժշկական տեսակետից ճիշտ:

2. Քաղաքացիական, կառավարական օրենքներ Իսրայելի ժողովրդի համար:

Ելից գրքից մինչև Բ օրինաց գիրքը կան շատ օրենքներ, որ տրվեցին հրեաներին՝ Իսրայել ժողովրդի համար սահմանադրություն հաստատելու նպատակով: Հավանաբար մեկից մինչև երեք միլիոն հրեաներ դուրս եկան Եգիպտոսից Մովսեսի առաջնորդությամբ: Նախկին ստրուկների այս զանգվածը պետք է կառավարություն ձևավորեր՝ նոր ազգությունը միավորելու և առաջնորդություն ու ծառայություններ ապահովելու համար: Այս օրենքներից շատերն այն մասին էին, թե ինչպես լուծել վեճերը, հողի վաճառքն ու վարձակալությունը, որբերի խնամքը և այլն:

3. Կրոնական օրենքներ:

Հին Կտակարանի օրենքներից շատերը վերաբերում էին հրեաների կրոնական պրակտիկային: Օրենքների մի մասն էլ վերաբերում էին քահանաների և ղևտացիների գործունեությանն ու պարտականություններին, տարբեր տեսակի կենդանիներին ու զոհաբերություններին, կրոնական տոներին և այլն:

4. Բարոյական օրենքներ:

Աստծո բարոյական օրենքները, որոնք վերաբերում են մարդկային փոխհարաբերություններին հաճախ բնութագրվում են որպես ժամանակից դուրս գտնվող օրենքներ: Տասը Պատվիրանները (Ելից 20:1-17) և Աստվածաշնչի մեծագույն օրենքները (Ղուկաս 10:27) Աստծո բարոյական օրենքների օրինակներ են: Աստծո բարոյական օրենքներին կարող է հնազանդվել ցանկացած մարդ ցանկացած մշակույթում, ազգությունում և ժամանակաշրջանում՝ անկախ իր տնտեսական կամ կրթական մակարդակից:

Հակոբոս 1:25.

«Իսկ ով ազատության կատարյալ օրենքին է նայում ու հետևում՝ լինելով լսող ու չմոռացող, այլև կատարող, նա այդ անելով երանելի կլինի»:

Այսպիսով, մենք նորից հետ ենք գալիս մեր հիմնական հարցին. Աստծո ո՞ր օրենքներին են պարտավոր հնազանդվել քրիստոնյաներն այսօր: Ո՞ր օրենքներին մենք կարիք չունենք, որ այսօր հնազանդվենք:

Բ. Վիճաբանություն, թե ո՞ր օրենքներին է այսօր պետք հնազանդվել:

Վիճաբանությունը, թե որ օրենքներին է պետք հնազանդվել, նոր չէ: Նույնիսկ Հիսուսի օրերում, Նոր Կտակարանի եկեղեցում, Հիսուսի երկինք համբարձվելուց

հետո տարբեր կարծիքներ կային: Եվ դրանից շատ առաջ էլ մենք տեսնում ենք կարծիքների բախում: Իրականում պատերազմը սկսվեց Ադամի ու Եվայի հետ Եդեմում, քանի որ Եվան հավատաց սատանային, երբ վերջինս ասաց, որ նա կարող է անտեսել Աստծո ասածը և իրականում ավելի լավ անձնավորություն դառնալ:

Ծննդոց 3:1-5.

«Արդ, օձն ավելի խորամանկ էր, քան դաշտի բոլոր գազանները, որ Տեր Աստվածն ստեղծել էր. և կնոջն ասաց. «Հիրավի՞ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք»: Եվ կինն ասաց օձին. «Պարտեզի ծառերի պտղից կարող ենք ուտել, բայց այն ծառի պտղից, որ Պարտեզի մեջտեղում է, Աստված ասաց. «Մի՛ կերեք դրանից, և դրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»: Եվ օձն ասաց կնոջը. «Ամեննին էլ չեք մեռնի: Այլ Աստված գիտի, որ այն օրը, որ դուք դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և Աստծո պես կլինեք՝ բարին ու չարն իմացող»:

Հետ նայելով՝ մենք տեսնում ենք, որ սատանան Եվային խաբեց՝ հավատալու ստին: Հետևանքները հիմնովին փոխեցին աշխարհը: Ամենակարևոր դասերից մեկը, որ մենք պետք է սովորենք Ադամի ու Եվայի փորձառությունից, Աստծուն հնագանդվելու կարևորությունն է, որպեսզի սատանան կամ որևէ այլ բան մեզ չխաբի:

Այսպիսով, Աստվածաշնչի ո՞ր օրենքներին ենք մենք պարտավոր հնագանդվել այսօր: Անգամ անկեղծ քրիստոնյաները շատ տարբեր կարծիքներ ունեն այն մասին, թե որ օրենքներին պետք է հնագանդվեն այսօր: Ահա այդ կարծիքներից մի քանիսի համառոտ նկարագիրը:

Դիրքորոշում 1.

Քրիստոնյաներն այսօր պետք է հնագանդվեն Հին Կտակարանի բոլոր օրենքներին:

Սա լայնորեն տարածված կարծիք չէ, սակայն որոշ քրիստոնյաներ հիմնվում են Հիսուսի այն խոսքերի վրա, որ Նա չեկավ Հին Կտակարանի օրենքները ավերելու, այլ կատարելու դրանք:

Մատթեոս 5:17-19.

«Մի՛ կարծեք, թե Ես եկա Օրենքը կամ Մարգարեներն ավերելու: Ավերելու չեկա, այլ կատարելու: Ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև երկինքն ու երկիրն անցնեն, Օրենքից մեկ կետ կամ մեկ նշանագիր չի անցնի՝ մինչև բոլորը կատարվի: Ով այս ամենափոքր պատվիրաններից մեկը խախտի և մարդկանց այդպես ուսուցանի, նա փոքրագույն պիտի կոչվի երկնքի թագավորության մեջ: Իսկ ով կատարի և սովորեցնի, նա մեծ պիտի կոչվի երկնքի արքայության մեջ»:

Գործք Առաքելոց գրքում մենք տեսնում ենք, որ Նոր Կտակարանի քրիստոնյա առաջնորդները պայքարում են այս խնդրի դեմ, հատկապես, երբ ոչ-հրեաները (հեթանոսները) դարձան քրիստոնյա: Նրանք վերջապես համաձայնեցին մի չափանիշի հետ, որտեղ հեթանոսներից չէր պահանջվում ապրել Հին Կտակարանի բոլոր օրենքների ներքո: Նրանք նամակ գրեցին այս նորադարձ քրիստոնյաներին և ասացին, թե Հին Կտակարանի որ օրենքներին նրանք պետք է հնազանդվեն: Այս ողջ վիճաբանությունը նկարագրված է Գործք 15-րդ գլխում:

Գործք 15:28-29.

«Որովհետև Սուրբ Հոգուն և մեզ հաճելի թվաց ձեզ վրա ավելի մեծ բեռ չդնել՝ բացի այս կարևոր բաներից, հեռու մնալ կուռքերին մատուցված զոհից, արյունից, խեղդված բաներից ու պոռնկությունից, եթե այս բաները ձեր անձերում պահեք, ճիշտ կանեք: Ո՛րչ կացեք»:

Մեկ այլ խնդիր, որն առաջանում է այս դիրքորոշման հետ, որ քրիստոնյաները պետք է հնազանդվեն Հին Կտակարանի բոլոր օրենքներին, այն է, որ այդ օրենքներից շատերը խոսում են տաճարի պաշտամունքի համար պահանջված կարգադրությունների մասին, որոնք ներառում են կենդանիների զոհաբերություններ: Մյուս օրենքները պահանջում են հունձքը հավաքել որոշակի ամիսների: Այդ օրենքները հնարավոր չէ պահել աշխարհի այն մասերում, որտեղ հունձքի ժամանակահատվածները լրիվ ուրիշ են:

Այս դիրքորոշման մի տարբերակն էլ այն է, որ քրիստոնյաները պետք է հնազանդվեն Հին Կտակարանի ոչ թե բոլոր օրենքներին, այլ դրանցից որոշներին: Սա մեզ դնում է մի դժվարին իրավիճակի մեջ, որտեղ ստիպված ենք որոշել, թե որ օրենքներին պետք է հնազանդվել, իսկ որոնք՝ անտեսել:

Դիրքորոշում 2.

Քրիստոնյաները պետք է հնազանդվեն Նոր Կտակարանի օրենքներին:

Մեկ այլ կարծիք, որին որոշ քրիստոնյաներ հետևում են, այն է, որ քրիստոնյաները պետք է հնազանդվեն միայն Նոր Կտակարանի օրենքներին: Նրանք ասում են, որ քրիստոնյաներից այսօր չի պահանջվում հնազանդվել Հին Կտակարանի օրենքներին: Երբ Հիսուսը եկավ և մեր մեղքերի համար մահացավ խաչի վրա, Նա իրականացրեց Հին Կտակարանի օրենքները և մի նոր ուխտի փոխհարաբերություն սկսեց քրիստոնյաների հետ:

Հովհաննես 5:3-ն ասում է. «Որովհետև Աստծո սերն այն է, որ պահենք Նրա պատվիրանները, և Նրա պատվիրանները ծանր չեն»: Նոր Կտակարանում Աստված մեզ տվել է շատ օրենքներ, որոնք բացատրում են, թե ինչ է Աստված ուզում, որ մենք անենք և ինչ չանենք: Տե՛ս Մատթեոս 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխները, Մարկոս 12:30-31, Հովհաննես 13:34, Հռոմեացիներին 13:1-2 և Եփեսացիներին 6:1-3:

Դիրքորոշում 3.

Սկզբնակետ՝ նորադարձ քրիստոնյաների համար:

Մենք պետք է շատ զգույշ լինենք, որպեսզի այստեղ չբռնվենք օրենքի մասին վիճաբանություններով՝ բաց թողնելով ավելի կարևոր բաները: Եթե դու անկեղծորեն հետաքրքրված ես Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու հարցում, ուրեմն քո առաջնայնությունները կենտրոնացրո՛ւ Նրա վրա: Հենց դա է մեզ ասում անել Եբրայեցիներին 12:2-ը. «Հիսուսին նայելով...»:

Հիսուսը չի փնտրում ընդամենն օրենք պահողներ, Նա փնտրում է մարդկանց, ովքեր ուզում են հնազանդվել Իրեն, քանի որ սիրում են Իրեն:

Աստծո օրենքներին հնազանդվելը այն ձևերից մեկն է, որը ցույց է տալիս Աստծուն, որ դու սիրում ես Նրան:

Երբ մարդիկ ամուսնանում են, նրանք հույս ունեն, որ պետք է սիրեն իրար: Դու լսե՛լ ես, որ մի զույգ իրենց մեղրամիսն անցկացնի՝ մարնամասնորեն գրելով օրենքներ, որոնց նրանք պետք է հնազանդվեն ամուսնական կյանքում:

Սակայն եթե իրոք սիրում ես քո կողակցին, դու կորոշես սահմաններ դնել քո կյանքում՝ որպես սիրո դրսևորում միմյանց հանդեպ:

Գ. Հնազանդվի՛ր Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին:

Կա մեկ այլ ձև՝ շրջանցելու այս մեծ վիճաբանությունը, թե Աստվածաշնչի որ օրենքներին է պետք հնազանդվել: Այս հարցն օրենքների շուրջ վիճաբանությունն դարձնելու փոխարեն փորձի՛ր այն վերածել իրական սիրո փնտրտուքի: Եթե դու իրոք ինչ-որ մեկին սիրում ես, ապա ուզում ես նրան հաճեցնել: Դու ուզում ես հասկանալ այդ անձնավորությանը և խուսափել այն բաներից, որ կցավեցնեն նրան կամ կվնասեն քո փոխհարաբերությանը նրա հետ:

Դու կարող ես որոշել՝ դիտարկել Աստվածաշնչի յուրաքանչյուր օրենք և հարցնել.

1. Ի՞նչ է ասում ինձ այս օրենքն Աստծո մասին:
2. Ինչո՞ւ է Աստված այս օրենքը տվել Իր ժողովրդին:
3. Ի՞նչ է փորձել Աստված սովորեցնել նրանց այս օրենքով:
4. Ո՞րն է այս օրենքի դասը կամ սկզբունքը, որ ես կարող եմ այսօր կիրառել Աստծո հետ իմ փոխհարաբերության մեջ:

Հին Կտակարանի օրենքները գրվել են Իսրայելի ժողովրդի (հրեաների) համար: Ավելի քան 600 օրենքներ էին տրվել նրանց՝ ձևավորելու համար իրենց

կառավարությունը, առողջապահությունը և կրոնական գործունեությունը: Այս օրենքները տրվել էին նրանց՝ իրենց առօրյա կյանքում և փոխհարաբերությունների մեջ օգնելու նպատակով, որպեսզի նրանք ապրեն հարգարժան, աստվածապաշտ կյանքով:

Հին Կտակարանի և Նոր Կտակարանի օրենքների հետևում եղած սկզբունքները մեզ կարող են դասեր տալ՝ կիրառելու համար տարբեր իրավիճակներում, որոնց մենք հանդիպում ենք ամենօրյա կյանքում:

Հիսուսի ուսուցումները:

Մատթեոս 5-7-րդ գլուխներում՝ Լեռան քարոզում, Հիսուսը բերում է մի քանի օրինակներ, թե ինչպես էին Նրա օրերի հրեաները սխալ կիրառում Հին Կտակարանի օրենքները: Որից հետո Նա առաջ է գնում՝ բացատրելով, թե ինչպես է Աստված ուզում, որ նրանք հասկանան Իր օրենքները: Հիսուսի բացատրությունները ցույց են տալիս, որ օրենքի հետևում եղած սկզբունքները շատ ավելի ընդարձակ կիրառում ունեն, քան օրենքի կոնկրետ ցուցումները:

Մատթեոս 5:21-22.

«Լսել եք, որ նախնիներին ասվեց. «Մի՛ սպանիր, որովհետև ով սպանություն անի՝ պիտի դատապարտվի»: Բայց Ես ասում եմ ձեզ, եթե մեկն առանց պատճառի բարկանա իր եղբոր վրա՝ դատաստանի ենթակա կլինի: Եվ ով իր եղբորը Ռաքա ասի՝ ասոյանին ենթակա կլինի: Իսկ ով իր եղբորը «հիմար» ասի՝ զեհենի կրակին ենթակա կլինի»:

Այս ամբողջ գլխում Հիսուսն անցնում է մի օրենքից մյուսը և ընդարձակում դրանց կիրառումը՝ խոսելով օրենքի հետևում եղած սկզբունքի մասին:

Եզներին կերակրելը և ծառայողներին վարձատրելը:

Պողոսը խորհուրդ է տալիս Տիմոթեոսին և այն եկեղեցուն, որտեղ նա հովիվ էր, և բացատրում, որ հովիվները պետք է համապատասխան վարձատրություն ստանան: Սա արդարացնելու համար Պողոսը Հին Կտակարանից մեջբերում է անում եզներին կերակրելու վերաբերյալ մի օրենք, և Հիսուսից՝ գործավորների աշխատավարձի վերաբերյալ:

Ա Տիմոթեոս 5:17-18.

«Լավ դեկավարող երեցները թող կրկնակի պատվի արժանի համարվեն, հատկապես նրանք, ովքեր ծառայում են խոսքով և վարդապետությամբ: Որովհետև Գիրքն ասում է. «Կալ անող եզան դունչը մի՛ կապիր», և «Մշակն արժանի է իր վարձին»:

Տե՛ս 1. Բ Օրինաց 25:4, 2. Ղուկաս 10:7

Թե՛ Հիսուսը, թե՛ Պողոսը օրինակով ցույց են տալիս, որ ն՛ Հին Կտակարանի օրենքները, ն՛ Նոր Կտակարանի օրենքները այսօր մեծ արժեք ունեն մարդկանց համար, որովհետև Աստծո օրենքներից յուրաքանչյուրի հետևում եղած սկզբունքները համապատասխանում են այն հարցերին, որոնց մենք հանդիպում ենք առօրյա կյանքում:

Արագության սահմանափակում:

Աստվածաշունչը չի տալիս առանձնահատուկ օրենքներ, թե ինչ պետք է անել քեզ հանդիպած ամեն մի իրավիճակում: Օրինակ, Աստվածաշունչում չկա օրենք, որն ասի. «Մեքենա վարելիս մի՛ գերազանցիր սահմանված արագությունը», կամ՝ «Թմրանյութ մի՛ օգտագործիր»: Սակայն Աստվածաշունչը մեզ տալիս է *սկզբունքներ*, որոնք մենք կարող ենք կիրառել այս իրավիճակների մեջ:

Աստվածաշունչը Հռոմեացիներին 13:1-2-ում հստակ ասում է, որ դու «հնազանդվես բարձր իշխանություններին»: Մեր երկրի առաջնորդներն ու ղեկավարները ստեղծել են օրենքներ, որոնք կարգավորում են մեքենաների արագությունը: Դրա համար մենք արագության այդ սահմանափակումներին ենթարկվելու պատասխանատվություն ունենք՝ ըստ Հռոմեացիներին 13:1-2-ում նշված սկզբունքների:

Պատվել կյանքը:

Աստվածաշունչն Ա Կորնթացիներին 6:19-20-ում ասում է, որ մեր մարմինները «Սուրբ Հոգու տաճար են, որ մեր մեջ է բնակվում... Փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնի մեջ...»: Եթե դու ուզում ես հնազանդվել Աստծո այս սկզբունքին, ապա չպետք է թմրանյութ օգտագործելով կործանես քո մարմինը: Թմրանյութ օգտագործելը նաև դեմ է այս երկրի օրենքներին: Այնպես որ, դա այս տեսակետից նույնպես սխալ է:

Ա Կորնթացիներին այս հատվածը խոսում է կյանքը պատվելու սկզբունքի մասին: Այն հստակ պատճառ է տալիս ինքնասպանություն չգործելու համար: Այս սկզբունքը նաև դեմ է արհեստական վիժեցումներին:

Մեզ համար շատ կարևոր է ուսումնասիրել Աստվածաշունչը՝ գտնելու համար կյանքի վերաբերյալ Աստծո սկզբունքները: Երբ սկսես քո վարքի մեջ հետևել այս սկզբունքներին, դու ի վիճակի կլինես Աստծուն ցույց տալ, որ սիրում ես Նրան: Տե՛ս Մատթեոս 23:23:

Սուրբ Հոգին քեզ կօգնի հասկանալ Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքները: Նա նաև քեզ կօգնի տեսնել, թե այդ սկզբունքներն ինչպես կիրառես քեզ հանդիպած իրավիճակներում: Երբ դու քո կյանքում հանդիպում ես խնդրի, ինքդ քեզ հարցրո՛ւ. «Աստվածաշունչի ո՞ր համարն է ուղեցույց հանդիսանում, թե ինչպես է պետք Աստծուն հաճելի ձևով արձագանքել»:

Դ. Ի՞նչ է «Աստծո կամքը»:

Մենք ցույց տվեցինք, թե ինչպես կարող ենք ցույց տալ Աստծուն, որ սիրում ենք Նրան՝ հնազանդվելով Նրա օրենքներին և այդ օրենքների հետևում եղած սկզբունքներին: Մեկ այլ ձև էլ, որով ես կարող եմ Աստծուն ցույց տալ, որ սիրում եմ Նրան, իմ անձնական իրավունքները նրան տալն է: Տե՛ս *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացի՝ Բարկություն և անձնական իրավունքներ* բաժինը՝ այս թեմայի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Այժմ դիտարկենք մեկ այլ ձև, որով կարող ենք Աստծուն ցույց տալ, որ սիրում ենք Նրան: Ես կարող եմ Աստծուն ցույց տալ, որ սիրում եմ Նրան՝ Նրա ասածներն անելով: Շատ անգամ սրան կարելի է հղում անել՝ որպես «Աստծո կամքը կատարել»: Սա նշանակում է՝ անել այն, ինչ Աստված է կամենում, որ ես անեմ, երբ Նա ինձ հստակ ասում է այդ մասին:

Մենք դիտարկելու ենք մի քանի տարբեր գործողություններ, որոնք Աստված ուզում է, որ դու սկսես անել հենց հիմա՝ այսօր:

Աստված ծրագիր ունի քեզ համար, և դա լավ ծրագիր է.

1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա.
Հռոմեացիներին 10:9
Բ Պետրոս 3:9
2. Դադարի՛ր մեղք գործել.
Ա Պետրոս 2:11
Ա Թեսաղոնիկեցիներին 5:22
3. Սկսի՛ր անել այն, ինչ ճիշտ է.
Հռոմեացիներին 12:1,2,9
4. Ժամանա՛կ տուր քրիստոնեական գործունեության համար.
Մատթեոս 6:19-21
5. Խնդիրներին ու փորձություններին արձագանքի՛ր Աստծո ուզած ձևով.
Հակոբոս 1:2-4
6. Սովորի՛ր Աստծո ձևով արձագանքել.
Հռոմեացիներին 8:29
7. Սովորի՛ր զգայուն լինել ուրիշների կարիքների հանդեպ.
Ա Կորնթացիներին 1:4-8
8. Կիսվի՛ր մարդկանց հետ՝ ինչ Քրիստոսն արել է քեզ համար.
Ա Պետրոս 3:15

Դու կարող ես սկսել այս բոլորն անել հենց հիմա: Սրանք այն բաներն են, որ Աստված ուզում է, որ դու անես: Դու կարիք չունես սպասելու, որ երկնքից նշան ստանաս՝ նախքան կսկսես այս բաներն անել:

Սակայն կան այլ որոշումներ, որոնց դու կհանդիպես քո կյանքում, և որոնց հարցում դու կցանկանաս հստակ առաջնորդություն ունենալ, որ դա հենց այն է, ինչ Աստված ուզում է, որ դու անես: Նման դեպքերում դու կարող ես Աստծո առաջնորդությունը փնտրել Աստվածաշունչ կարդալով, աղոթելով և հոգևոր մարդկանցից խորհուրդ հարցնելով:

Իմ անձնական համոզմունքներն Աստծուց:

Անձնական համոզմունքները Աստծուց տրված անձնական սահմաններ են՝ քեզ օգնելու և պաշտպանելու համար: Սուրբ Հոգին շատ անգամ է մարդկանց հուշում այն բաների վերաբերյալ, որոնք Նա չէր ցանկանա, որ նրանք անեին: Օրինակ, որոշ մարդիկ անձնական համոզմունքներ ունեն գինի խմելու, կինո գնալու, որոշակի հագուստների կամ գումար ծախսելու վերաբերյալ: Այս անձնական համոզմունքները Աստծո կամքի կարևոր մասն են այդ անձնավորությունների համար:

Մեկ այլ ձևով սա կարելի է սահմանել որպես «անձնական օրենք» կամ «անձնական սահման», որ Աստված է տվել քեզ: Անպայման չէ, որ դա աստվածաշնչյան օրենք լինի, որն Աստված տվել է ամբողջ աշխարհին՝ հնազանդվելու համար: Դու կարող ես վստահ լինել, որ Աստծուց տրված բոլոր անձնական համոզմունքները քեզ համար ավելի սեղմ սահմաններ են, քան Աստվածաշնչում գրված օրենքները:

Աստված քեզ անձնական համոզմունք չի տա այն մասին, որ նորմալ է ամուսնությունից դուրս սեռական հարաբերություն ունենալը, որովհետև դու իրոք սիրում ես տվյալ անձնավորությանը: Դա ուղղակի կհակասեր այն ամենին, ինչ Աստված ասել է Աստվածաշնչում:

Աստծուց ստացած յուրաքանչյուր անձնական համոզմունքի մենք պետք է նայենք այնպես, ինչպես նայում ենք Աստծո օրենքներից յուրաքանչյուրին. ո՞րն է տվյալ համոզմունքի հետևում եղած սկզբունքը, որն օգնում է ինձ հասկանալ Աստծուն, և թե ինչո՞ւ է Նա ուզում, որ ես այդ ձևով արձագանքեմ:

Մենք այստեղ խոսում ենք անձնական համոզմունքների մասին, որոնցով Աստված առաջնորդել է տվյալ անձնավորությանը, որպեսզի այդ կերպ վարվի: Մենք չենք խոսում անձնական հետաքրքրությունների մասին, որ յուրաքանչյուր անձնավորություն կարող է ինքնուրույն որոշել:

Անձնական հետաքրքրություններ

Ընտրությունների մեկ այլ տեսակ ներառում է անձնական բնույթի ընտրությունը, որը մարդիկ կատարում են ըստ իրենց ճաշակի և ապրելակերպի: Օրինակ, կան մարդիկ, ովքեր չեն սիրում դարչնագույն հագուստ հագնել: Նրանց անձնական ընտրությունն այլ գույնի հագուստ հագնելն է: Սա նորմալ է, սակայն անձնական ընտրություն է, ոչ թե համոզմունք, որ Աստված է դրել այդ մարդկանց մեջ:

Որոշ մարդիկ նախընտրում են որոշակի սննդատեսակներ: Հնարավոր է՝ բժիշկն է նրանց խորհուրդ տվել, որպեսզի սննդակարգը որոշակիացնեն՝ կապված իրենց առողջության հետ: Հետևել բժշկի խորհրդին և անձնական սահմաններ դնել, իհարկե, խելացի որոշում է: Սակայն սա միշտ չէ, որ Աստուծուց տրված համոզմունք է:

Անձնական հետաքրքրություններ:

Մենք պետք է ուշադիր լինենք և հարգենք ուրիշների անձնական համոզմունքները:

Հոմեացիներին 14:20-22.

«Կերակուրի պատճառով մի՛ կործանիր Աստծո գործը: Ամեն բան մաքուր է, սակայն պիղծ է այն մարդուն, ով գայթակհություն պատճառելով է ուտում: Լավ է միս չուտել և գինի չխմել ու ոչ էլ մի այնպիսի բան անել, որով քո եղբայրը կգայթակհվի, կսայթաքի կամ կտկարանա: Դու հավատ ունե՞ս, այն պահի՞ր քեզ համար՝ Աստծո առջև: Երանի նրան, ով իր անձը չի դատապարտում նրանով, ինչն ինքն ընդունում է»:

Միևնույն ժամանակ մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի մեր անձնական համոզմունքները չպարտադրենք մյուսներին: Միայն այն, որ Աստված ուզում է, որ դու որևէ անձնական կարծիք ունենաս, դեռ չի նշանակում, որ բոլորը պետք է հետևեն քո օրինակին:

Իրականում հարցը սրանում է. դու իրո՞ք այնքան շատ ես սիրում Աստծուն, որ ուզում ես Նրան հնազանդվել քո կյանքի բոլոր ասպարեզներում: Անձնական չափանիշները, որ ինքդ քեզ համար դրել ես, կարող է քեզ օգնել՝ բարձրացնելու քո վարքի որակը, այսինքն՝ ամեն օր ավելի մոտ լինելու Հիսուսին:

Տե՛ս նաև Ա Պետրոս 2:16-ը և նշի՛ր, թե ինչպես է Աստծո կամքը կապված Աստծո օրենքների հետ:

Դու քո կյանքում առնչվում ես մեծ ու փոքր որոշումների հետ: Աստված ուզում է, որ դու տեսնես առաջնորդության համար Աստծուն դիմելու կարևորությունը: Աստված ծրագիր ունի քո կյանքի համար, և դա լավ ծրագիր է: Լինի դա քո մասնագիտությունն ընտրելը, ամուսնանալը կամ չամուսնանալը, միևնույն է, Աստված քեզ համար ծրագիր ունի:

Երեմիա 29:11.

«Քանի որ Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին, - ասում է Տերը, - խաղաղությամբ և խորհուրդներ և ո՛չ թե չարիքի, որ ձեզ ապագա ու հույս տամ»:

Եփեսացիներին 2:10.

«Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոս Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք»:

Դու կարող ես անտեսել Աստծուն, կամ կարող ես ասել. «Աստված իմ, ես ուզում եմ անել այն, ինչ դու ես ուզում, որ անեմ: Օգնի՛ր ինձ տեսնել, թե ինչ ես Դու ուզում, որ ես անեմ»: Հիսուսը ցույց տվեց Իր նվիրվածությունը՝ Իր կյանքի համար Աստծո ծրագրին հետևելու առումով:

Հովհաննես 5:19-20.

«Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ Որդին Ինքն Իրենից ոչինչ չի կարող անել, այլ՝ ինչ տեսնում է Հորն անելիս, որովհետև, ինչ բաներ, որ Նա է անում, այդ էլ Որդին է անում նույն ձևով: Որովհետև Հայրը սիրում է Որդուն և ամեն բան, ինչ Ինքն անում է, ցույց է տալիս Նրան, և սրանցից ավելի մեծ գործեր է ցույց տալու Նրան, որ դուք զարմանաք»:

Մենք կարող ենք հետևել Հիսուսի օրինակին և ամենօրյա նպատակ դարձնել՝ անելու այն, ինչ Աստված է ուզում, որ մենք անենք: Ինչքան շատ քո առօրյա որոշումների մաս դարձնես սա, այնքան ավելի լավ կսովորես, թե ինչպես դա անել:

Գլուխ 4

Աստծուն հնազանդվելու արդյունքները:

Ի՞նչ է լինում, երբ ես հնազանդվում եմ Աստծո օրենքներին: Հաճախ մենք բաց ենք թողնում մեր գործողությունների հետևանքները. չենք հասկանում մեր հնազանդության քայլերի հզոր ազդեցությունը, և թե ինչպես են դրանք ազդում մարդկանց վրա:

Երբ Մովսեսը հրեա ժողովրդին Եգիպտոսից դուրս հանեց և նախապատրաստեց նրանց՝ իրենց խոստումի նոր երկիրը մտնելուն, նա Աստծուց ստացած շատ հստակ պատգամ տվեց նրանց:

Բ Օրինաց 11:26-28.

«Ահա ես այսօր ձեր առջև դնում եմ օրհնություն և անեծք. օրհնություն, եթե հնազանդվեք ձեր Աստծո պատվիրաններին, որոնք այսօր ես ձեզ պատվիրում եմ, և անեծք, եթե չլսեք ձեր Աստծո պատվիրանները և շեղվեք այն ճանապարհից, որ այսօր ձեզ պատվիրում եմ, և գնաք օտար աստվածների հետևից, որոնց չեք ճանաչում»:

Աստված հստակ ասաց, որ եթե նրանք հնազանդվեին Իրեն, կվայելեին Նրա օրհնությունն իրենց կյանքում: Նույնը ճիշտ է նաև այսօր մեզ համար. եթե մենք հնազանդվենք Աստծո օրենքներին, կարող ենք վստահ լինել, որ Նրա օրհնությունը կլինի մեր կյանքում:

Աստծուն հնազանդվելը փրկություն վաստակելու համար չէ. տոմս՝ երկինք գնալու: Փրկությունը թանկագին պարզ է՝ տրված Աստծուց: Որպես Աստծո հանդեպ մեր սիրո արտահայտություն՝ քո հնազանդությունը ցույց է տալիս, որ դու ուզում ես Նրա հետ ապրել ճիշտ փոխհարաբերության մեջ: Մենք բոլորս կարիք ունենք, որ Նրա սահմանները մեզ պաշտպանեն այն կործանիչ երևույթներից, որ կարող են ավերել մեր կյանքը:

Հնազանդության հետևանքներին նայելու մեկ այլ ձև էլ հետևյալ հարցին պատասխանելն է.

Ինչպե՞ս է Աստծո հանդեպ հնագանդությունն ազդում իմ փոխհարաբերությունների վրա նշված անձնավորությունների հետ.

1. Աստված
2. Ինքս
3. Ծնողներս ու ընտանիքս
4. Երեխաներս
5. Ընկերներս
6. Աշխատակիցներս
7. Այլ անձինք՝ ներառյալ նրանք, ում ես չեմ ճանաչում:

Այն, թե ինչպես ես դու որոշում հնագանդվել Աստծուն, ազդում է ոչ միայն Աստծո հետ, այլ նաև քո շրջապատի մարդկանց հետ ունեցած քո փոխհարաբերությունների վրա:

Հովսեփը ստիպված էր դժվարին որոշումներ կայացնել:

Երիտասարդ Հովսեփի եղբայրները նրան վաճառեցին, և նա հայտնվեց Եգիպտոսում՝ որպես ստրուկ: Մենք նրա կյանքում հենց սկզբից տեսնում ենք Աստծուն հնագանդվելու հետևանքները:

Ծննդոց 39:2-4.

«Տերը Հովսեփի հետ էր, և նա հաջողակ մարդ էր և իր եգիպտացի տիրոջ տանն էր: Եվ նրա տերը տեսավ, որ Տերը նրա հետ էր, և թե՛ ինչ որ անում էր, Տերը նրա ձեռքով հաջողում էր: Եվ Հովսեփը շնորհ գտավ նրա առջև և ծառայում էր նրան, և սա իր տան վերակացու նշանակեց նրան և իր ամբողջ ունեցվածքը նրա ձեռքը հանձնեց»:

Որոշ ժամանակ անց Պետսփրեսի կինը փորձեց գայթակղել նրան: Հովսեփը դժվարին որոշման առջև կանգնեց. եթե նա որոշեր հնագանդվել Աստծուն, ստիպություն կպատճառեր Պետսփրեսի կնոջը:

Ծննդոց 39:6-9.

«Եվ նա իր ամբողջ ունեցվածքը Հովսեփի ձեռքում թողեց և նրա մոտ կատարված ոչ մի բանից տեղեկություն չունե՛ր՝ բացի իր կերած հացից: Եվ Հովսեփը գեղեցիկ էր դեմքով և շատ համակրելի: Եվ եղավ, որ այս անցքերից հետո նրա տիրոջ կինն աչք դրեց Հովսեփի վրա և ասաց. «Պառկի՛ր ինձ հետ»: Բայց նա մերժեց և իր տիրոջ կնոջն ասաց. «Ահա իմ տերը չգիտե իր տան եղածից ինչ կա իր մոտ, և իր ամբողջ ունեցվածքն իմ ձեռքն է հանձնել: Այս տան մեջ ինձնից ավելի մեծ մեկը չկա, և ինձնից ոչ մի բան չի արգելել՝ բացի քեզնից. ընդ որում՝ դու նրա կինն ես. ուրեմն ինչպե՞ս գործեմ այս մեծ չարիքը և մեղանչեմ Աստծո դեմ»:

Հովսեփը որոշեց հնազանդվել Աստծուն և շուտով լուրջ խնդիրների բախվեց: Պետափրեսի կինը մեղադրեց նրան բռնաբարության փորձի մեջ, և Հովսեփը բանտ ընկավ:

Լինում են դեպքեր, երբ Աստծուն հնազանդվելը քեզ գցում է լուրջ խնդիրների մեջ: Սակայն դու կարող ես վստահ լինել, որ ինչպես Աստված ամեն իրավիճակում Հովսեփի հետ էր, այնպես էլ Աստված քեզ կօգնի՝ դեմ կանգնելու ցանկացած խնդրի, որ կհանդիպի քեզ՝ որպես հետևանք՝ Նրան հնազանդվելու:

Մեղրաք, Միսաք և Աբեղնագով:

Դանիել մարգարեության 3-րդ գլխում մենք կարդում ենք մի պատմություն երեք երիտասարդների մասին, որոնք նույնպես ընկան դժվարին կացության մեջ, երբ որոշեցին հնազանդվել Աստծուն: Այդ ճիշտ որոշումը նրանց դրեց կյանքի ու մահվան իրավիճակում: Նրանց հրամայվել էր խոնարհվել և երկրպագել Նաբուգոդոնոսոր թագավորի պատրաստած նոր պատկերին:

Երբ նրանք հրաժարվեցին պաշտել կուռքին, նրանց բերեցին թագավորի մոտ: Նա նրանց ընտրության հնարավորություն սովեց՝ խոնարհվել և երկրպագել արձանին, կամ գցվել հնոցի կրակի մեջ: Աստված զարմանահրաշ ձևով վնասվելուց ազատեց Մեղրաքին, Միսաքին ու Աբեղնագովին, և նրանք հնոցից ողջ և առողջ դուրս եկան: Թագավորը և ողջ ժողովուրդն ազդվեց հնազանդության այս քայլից:

Առօրյա կյանքում մեզ հանդիպող իրավիճակների մեծ մասը ծայրահեղ չեն, ինչպիսին որ այդ օրը կատարվել էր երեք երիտասարդների հետ: Սակայն անկախ խնդրի մեծ ու փոքր լինելուց՝ Աստծուն հնազանդվելու քո ընտրությունը միշտ մեծ ազդեցություն կունենա քո և քո շրջապատի մարդկանց վրա:

Բրայենի հնազանդության քայլը:

Բրայենն իր թմրամոլության հարցերը լուծում էր մարդկանցից գողություն անելով: Թին Չելենջ գալուց և իր հին կենսակերպը թողնելուց հետո նա շուտով իմացավ, թե ինչ է նշանակում Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն ունենալ: Մի քանի ամիս անց, երբ նա Մուրբ Գիրք էր կարդում և աղոթում, իր սրտում զգաց, որ Աստված խոսում էր իր հետ և ասում, որ վերադարձներ այն գումարը, որ նա գողացել էր բանկից:

Նա ավարտեց Թին Չելենջը, աշխատանք գտավ և սկսեց գումար հավաքել, որպեսզի վերադարձնի իր գողացածը: Նա գայթակղություն ունեցավ՝ պարզապես գումարը դնել ծրարի մեջ և ուղարկել բանկ, առանց ստորագրության: Սակայն իր սրտում նա զգում էր, որ Աստված մղում է նրան, որպեսզի չօգտագործի այդ տարբերակը:

Վերջապես նա հավաքեց գումարը և զանգելով բանկի նախագահին՝ ժամադրեց փողը վերադարձնելու համար: Քարտուղարը ժամադրություն նշանակեց, սակայն

հետ զանգեց ասելու, որ ստիպված էին տեղյակ պահել ուստիկանությանն այն մասին, թե ինչ էր նա մտադրվել անել: Սա Բրայենին դրեց դժվարին կացության մեջ, քանի որ նա արդեն պայմանական դատվածություն ուներ մեկ այլ հանցանքի համար: Եթե ուստիկանությունը հետևեր նրա այս քայլին, նա կարող էր բանտում հայտնվել Աստծուն հնազանդվելու պատճառով:

Երբ նա հանդիպեց բանկի նախագահին, որպեսզի վերադարձնի փողը, տեղի ունեցան մի քանի անսպասելի բաներ: Առաջինը. նախագահը ցանկացավ իմանալ, թե ինչու է նա վերադարձնում գումարը: Դա Բրայենի համար շատ լավ հնարավորություն դարձավ՝ պատմելու նրան, թե ինչ փոփոխություններ է արել Հիսուսն իր կյանքում: Խոսակցությունը շարունակվեց 45 րոպե:

Երբ նա իր ընկերոջ հետ դուրս եկավ նախագահի գրասենյակից, Բրայենն ասաց. «Կարծես երկու հարյուր կիլոգրամանոց ծանրություն վերցրին իմ ուսերից»: Հետագա օրերի ու տարիների ընթացքում Բրայենը վայելում էր այն օգուտները, որ ստացել էր Աստծուն հնազանդվելու հետևանքով: Չունեն ոչ մի ափսոսանք, ոչ մի արցունք, միայն՝ Աստծո խաղաղությունը:

Սակայն Բրայենի հնազանդության քայլն ավելի շատ ազդեց մարդկանց վրա, քան նա կարող էր պատկերացնել: Հասկապես ազդեցություն ունեցավ բանկի նախագահի վրա ավելի ուժեղ, քան նա ակնկալում էր: Եվ միայն Աստված գիտի, թե այս բանկի նախագահը քանի մարդկանց պատմեց Բրայենի քայլի մասին: Եվ մարդիկ, ովքեր ոչ մի անգամ չէին հանդիպել Բրայենին, լսելով նրա այս քայլի մասին՝ համարձակություն ստացան, որպեսզի իրենք էլ հնազանդվեն Աստծուն:

Թե՛ Աստվածաշունչը, թե՛ ժամանակակից օրինակները՝ ինչպես Բրայենին է, խոսում են հնազանդության արդյունքների մասին: Ահա մի քանի համարներ, որոնք պատմում են հնազանդության հետևանքների մասին.

1. Ելից 19:3-6
2. Բ Օրինաց 11:26-28
3. Հոբ 36:11
4. Առակաց 2:21
5. Երեմիա 7:23
6. Մադաքիա 3:7-12
7. Հովհաննես 14:15-16
8. Հովհաննես 14:21, 23
9. Հովհաննես 15:10,11
10. Հռոմեացիներին 5:18-19
11. Հռոմեացիներին 6:16
12. Հռոմեացիներին 6:23
13. Հռոմեացիներին 13:1-6
14. Եփեսացիներին 6:1-3

15. Եբրայեցիներին 5:8-9

16. Ա Պետրոս 2:13-17

Մեկ այլ Աստծուն հնազանդվելու արդյունքները տեսնելու ձև է քո կյանքի ամենօրյա փորձառությունները գրի առնելը, երբ դու առիթ ես ունեցել հնազանդվելու Աստծուն: Թե ի՞նչ է տեղի ունեցել, հնարավոր է, այնքան դրամատիկ չի եղել, ինչքան որ Բրայենի դեպքում:

Շատ անգամ փոքր որոշումները, թվում է, շատ քիչ են ազդում կամ ընդհանրապես չեն ազդում մեր կյանքի վրա: Սակայն իրականում դրանք մեզ նախապատրաստում են ավելի մեծ մարտահրավերների համար, որոնց մենք կհանդիպենք հետագա օրերի ընթացքում: Այնպես որ, այս փոքրիկ հնազանդությունները մեծ ազդեցություն են ունենում մեր կյանքում, եթե նայենք ավելի լայն ժամանակահատվածում:

Ղուկաս 16:10.

«Քիչ բանի մեջ հավատարիմը, շատ բանի մեջ էլ հավատարիմ է: Եվ քիչ բանի մեջ անիրավը, շատ բանի մեջ էլ անիրավ է»:

Գլուխ 5

Աստծուն չհնազանդվելու արդյունքները

Ի՞նչ է տեղի ունենում, երբ անհնազանդ ես լինում: Սատանան ուզում է, որ դու հավատաս, որ քեզ ոչ մի վատ բան չի պատահի, եթե չհնազանդվես Աստծո օրենքներին: Սակայն սա ճիշտ չէ: Աստվածաշունչը հստակ սովորեցնում է, որ Աստծուն չհնազանդվելը սխալ է:

Աստվածաշունչը բոլոր անհնազանդությունները բնութագրելու համար օգտագործում է չորս տառանոց պարզ մի բառ՝ ՄԵՂՔ: Աստված խոստանում է, որ բոլոր մեղքերը պատժվելու են: Պատիժը, հնարավոր է, անմիջապես չգա, բայց այն, միևնույն է, գալու է:

Ա. Ի՞նչ կարող եմ ես սովորել ուրիշների անհնազանդությունից:

Աստված շատ անաչառ կերպով է նկարագրել մարդկանց Աստվածաշնչում: Մենք կարողում ենք ոչ միայն նրանց հաջողությունների մասին, այլ նաև տեսնում ենք նրանց ձախողումներն ու մեղքերը: Աստվածաշունչն ասում է, որ այս բոլորը գրվել է Աստվածաշնչում, որպեսզի օրինակ լինի մեզ համար: Այնպես որ, մենք կարող ենք սովորել նրանց սխալներից, որպեսզի նույն սխալները չկրկնենք մեր առօրյա կյանքում:

Այն, ինչ Աստված հրեաներին ասել էր մի քանի հազար տարի առաջ, մինչև այսօր էլ ճշմարիտ է:

Բ Օրինաց 11:26-28.

«Ահա ես այսօր ձեր առջև դնում եմ օրհնություն և անեծք. օրհնություն, եթե հնազանդվեք ձեր Աստծո պատվիրաններին, որոնք այսօր ես ձեզ պատվիրում եմ, և անեծք՝ եթե չլսեք ձեր Աստծո պատվիրանները և շեղվեք այն ճանապարհից, որ այսօր ձեզ պատվիրում եմ, և գնաք օտար աստվածների հետևից, որոնց չեք ճանաչում»:

Աղամն ու Եվան Եդեմի պարտեզում

Անհնազանդության բոլոր քայլերը հետևանքներ են ունենում: Աղամն ու Եվան այդ մասին շատ շուտ իմացան Եդեմի պարտեզում: Սատանան նրանց մոտեցավ հետևյալ հարցով. «Հիրավի՞ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք» (Ծննդոց 3:1):

Եվան պատասխանեց Աստծո ցուցումով՝ հաստատելով, որ եթե նրանք ուտեն պարտեզի մեջտեղում գտնվող այդ ծառի պտղից, կմեռնեն (հ. 2-3):

Եվան, այնուհետև, ընկավ սատանայի թակարդը, որը վերջինս խորամանկ ձևով օգտագործում է մինչև այսօր. Եվան հավատաց նրա ստին:

Ծննդոց 3:4-5.

«Եվ օձն ասաց կնոջը. «Ամենին էլ չեք մեռնի: Այլ Աստված գիտի, որ այն օրը, որ դուք դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և Աստծո պես կլինեք՝ բարին ու չարն իմացող»:

Աստծուն հնազանդվելու փոխարեն Եվան որոշեց հավատալ սատանային և ուտել արգելված պտուղը: Վայելքը երկար չտևեց, իսկ Աղամը կրկնեց նրա քայլը: Սակայն անհնազանդության լուր մեկ քայլն իր հետևից բերեց կործանիչ հետևանքների մի ամբողջ շղթա: Անհնազանդության այդ «փոքրիկ» քայլը փոխեց ողջ աշխարհը և մեղքի անեծքը բերեց իր կյանքի և ողջ աշխարհի մեջ: Մինչև այսօր մենք տառապում ենք Եվայի անհնազանդության հետևանքների պատճառով:

Դավիթ թագավորն ու Բերսաբեն

Բ թագավորաց 11-12 գլուխներում մենք կարդում ենք Դավիթ թագավորի և նրա անհնազանդության քայլի ու այդ մեղքին հաջորդող հետևանքների շղթայի մասին: Այն սկսվեց որպես կրքի մեկ հատիկ քայլ. նա տեսավ մի լողացող կնոջ և մարդ ուղարկեց նրա հետևից: Երբ կինը եկավ, նա քնեց այդ կնոջ հետ՝ չնայած այն բանին, որ գիտեր, որ նա ամուսնացած է իր գլխավոր ռազմիկներից մեկի հետ: Նա անտեսեց, թե ինչ էր Աստված ասել տասը պատվիրաններից յոթերորդում. «Շնորհուն մի՛ արա» (Ծննդոց 20:14):

Դավիթ թագավորը շուտով բռնվում է հետևանքների մի շղթայով, որոնք բոլորը կապված էին Բերսաբեի հետ ունեցած կարճատև հաճույքի հետ: Շատ չանցած՝ Բերսաբեն նրան տեղյակ է պահում, որ հղի է: Թագավորը պատերազմի դաշտից հետ է կանչում նրա ամուսնուն՝ Ուրիային, և փորձում է ուղարկել տուն՝ իր կնոջ մոտ, որպեսզի ծածկի իր մեղքը:

Սակայն Ուրիան հարգալից կերպով մերժում է այդ առաջարկը և որոշում է քնել դրսում՝ մյուս զինվորականների հետ, քանի որ իր բոլոր զինակիցները դեռևս մարտի դաշտում էին:

Երբ Դավթի՝ իր մեղքը թաքցնելու փորձը ձախողվում է, նա ընկնում է ավելի մեծ մեղքերի մեջ: Նա դավադրություն է կազմակերպում՝ սպանել Ուրիային: Իրեն հավատարիմ գեներալների միջոցով թշնամու ձեռքն է մատնում նրան. դավադրությունն ավարտվում է Ուրիայի մահով: Դավթի ամեն մի սխալ որոշման հետևանքով, ավելի ու ավելի շատ մարդիկ էին տուժում նրա մեղքի պատճառով:

Ուրիայի մահից հետո Դավթին ամուսնանում է Բերսաբեի հետ և երեխա է ունենում նրանից: Բայց Աստծուն դուր չի գալիս նրա արարքը և Նա ուղարկում է Նաթան մարգարեին՝ հանդիմանելու Դավթին իր մեղքի համար: Նորածին երեխան մի քանի օր անց մահանում է: Դավթին ընդունում է իր մեղքը, սակայն, միևնույն է, շարունակում է կրել հետևանքները, որոնք ազդում են նրա վրա մինչև իր կյանքի վերջը:

Ողբալի է, որ այսօր մարդիկ շարունակում են օգտագործել Դավթի և Բերսաբեի մեղքը, որպեսզի արդարացնեն Աստծուն չհնազանդվելու՝ իրենց սեփական քայլերը:

Աստվածաշնչում բազմաթիվ են Աստծուն չլսելու հետևանքների վերաբերյալ օրինակները: Դրանցից յուրաքանչյուրը սթափեցնող օրինակ է այն բանի, որ չպետք է հետևենք նրանց քայլերին, այլապես մենք նույնպես կկրենք մեղքի աղետալի հետևանքները:

Մի հանգամանք էլ. չկա «ապահով մեղք» հասկացություն: Պահպանակը կարող է նվազեցնել վարակիչ հիվանդություններով վարակվելու հնարավորությունը, սակայն ֆիզիկական հիվանդություններից այն կողմ կան նաև այլ հետևանքներ: Անհնազանդության ցանկացած քայլ դուր է բացում կործանիչ հետևանքների համար:

Բ. Անհնազանդության հետ կապված չորս առանցքային բառեր:

Որպեսզի ավելի մոտիկից դիտարկենք, թե ինչ է տեղի ունենում մեր կյանքում, երբ մենք անհնազանդ ենք լինում Աստծուն, կան չորս հանգամանքներ, որ մենք պետք է հասկանանք: Դրանք են՝ բնական հետևանքները, դաստիարակությունը, պատիժը և վրեժխնդրությունը, որոնք հաճախ սխալ են հասկացվում, հատկապես՝ Աստծո հանդեպ մեր անհնազանդության վերաբերյալ:

1. Բնական հետևանքներ:

Երբ մենք չենք հնազանդվում Աստծուն, միշտ լինում են հետևանքներ: Սրանք նույնը չեն, ինչ՝ դաստիարակությունն ու պատիժը:

Ծնողը երեխային ասում է. «Վառարանին մի՛ դիպչիր, այն տաք է»: Եթե երեխան չհնազանդվի և դիպչի վառարանին, ապա նրա անհնազանդության բնական հետևանքը կլինի վառված մատը:

Բժիշկ Ս. Ի. Մաք Միլլենն իր՝ «Այս հիվանդություններից ոչ մեկը» գրքում քննարկում է Աստծո առողջապահական օրենքներին հնազանդվելու կամ չհնազանդվելու մի քանի բնական հետևանքներ: Դու կարող ես կարդալ այդ գիրքը և տեսնել, թե ինչպես է ժամանակակից բժշկությունը հաստատում Աստծո օրենքներին չհնազանդվելու վնասակար հետևանքները:

Բնական հետևանքներն ինչ-որ բան անելու բնական արդյունքներն են: Այս հետևանքները նույնը չեն, ինչ՝ դաստիարակությունն ու պատիժը: Երբ չենք հնազանդվում Աստծուն, հնարավոր է, որ մենք անմիջապես չտեսնենք հետևանքները, սակայն ժամանակի ընթացքում դրանք ավելի ցայտուն ու տեսանելի կդառնան:

Գաղատացիներին 6:7-10.

«Մի՛ խաբվեք, Աստված չի ծաղրվի, որովհետև մարդն ինչ ցանում է, այն էլ պիտի հնձի: Իր մարմնի համար ցանողն իր մարմնից ապականություն կհնձի, իսկ Հոգու համար ցանողը Հոգուց հավիտենական կյանք կհնձի: Եկե՛ք բարին գործելուց չհոգնենք, որովհետև իր ժամանակին պիտի հնձենք, եթե չթուլանանք»:

Երբեմն մենք չենք տեսնում այդ հետևանքները, սակայն մեր շրջապատի մարդիկ տեսնում են այդ վնասը: Եթե դու չես տեսնում Աստծուն չլսելու հետևանքները, ապա կարող ես այս հարցը քննարկել ավելի հասուն քրիստոնյայի հետ և խորհուրդ հարցնել:

Դու կարող ես սովորել, թե ինչպես նկատես այդ հետևանքները՝ Աստվածաշնչում կարդալով մարդկանց անհնազանդության վերաբերյալ պատմությունները: Ուշադի՛ր նայիր, թե ինչ տեղի ունեցավ նրանց կյանքում իրենց մեղքի արդյունքում:

Աստծուն չհնազանդվելու հետևանքների մասին մենք կարող ենք իմանալ նաև՝ պատասխանելով այս հարցին.

Ինչպե՞ս է Աստծուն չհնազանդվելն ազդում հետևյալ անձնավորությունների հետ իմ փոխհարաբերությունների վրա:

1. Աստված
2. Ինքս
3. Ծնողներս ու ընտանիքս
4. Երեխաներս (ներկա կամ ապագա)
5. Ընկերներս
6. Ուրիշ մարդիկ՝ ներառյալ նրանք, ում ես չեմ ճանաչում:

Անհնազանդության հետևանքները սովորաբար շատ ավելի վատ են լինում, քան մենք ակնկալում ենք: Իրականում մեզնից շատերը հակված են Եվայի նման արձագանքելուն. մենք հետևում ենք գայթակղությանը, անտեսում ենք Աստծո ասածը և պարզապես տեսնում ենք վայրկենական հաճույքի հնարավորությունը:

Աստծուն չլսելու հետևանքների մասին խորհելու լավագույն ժամանակը նախքան այդ քայլն անելն է: Սա ինքնաբերաբար չի լինում: Դու պետք է ինքդ քեզ վարժեցնես հետևյալ հարցը տալուն՝ նախքան քայլ անելը. «Որո՞նք կլինեն հետևանքները, եթե ես որոշեմ այս բանն անել»: Սա իրոք կարող է քեզ հետ պահել բազմաթիվ վշտերից ու խնդիրներից, եթե դու որոշես հնազանդվել Աստծուն՝ Նրան չհնազանդվելու փոխարեն:

2. Դաստիարակություն:

Եթե մենք չհնազանդվենք Աստծուն, Նա շատ անգամներ կդաստիարակի մեզ: Դաստիարակության իմաստը սխալն ուղղելու մեջ է: Դաստիարակության նպատակն է՝ օգնել մարդուն՝ ճիշտ ապրել, հաջորդ անգամ նմանատիպ իրավիճակում հնազանդվելու որոշում կայացնել:

Եբրայեցիներին 12:5-13-ը բացատրում է պատճառները, թե ինչո՞ւ է Աստված մեզ դաստիարակում: Բայց և այնպես դու պետք է տեղյակ լինես, որ աստվածաշնչյան որոշ թարգմանություններ այստեղ օգտագործում են «պատժել» բառը՝ դաստիարակել բառի փոխարեն: Նման դեպքերում թարգմանությունը նեղ բաժանում չի կատարում դաստիարակության և պատժի միջև՝ ինչպես որ մենք ենք անում այստեղ՝ այս դասի մեջ: Աստվածաշնչում շատ տեղերում «պատիժ» բառն օգտագործված է ավելի ընդարձակ իմաստով՝ ներառելով դաստիարակության և հանդիմանության ցանկացած տեսակ:

Եբրայեցիներին 12:10-11.

«Որովհետև նրանք իրապես մի քանի օրվա համար են մեզ խրատում՝ իրենց լավագույն համարած ձևով, իսկ Նա՝ մեր բարիքի համար, որպեսզի Իր սրբությանը հաղորդակից դառնանք: Ճիշտ է, ոչ մի խրատ նույն պահին ուրախությամբ չի ընդունվում, այլ՝ տրտմությամբ. սակայն հետագայում նրանով կրթվածներին արդարության խաղաղարար պտուղն է տալիս»:

Աստված մեզ դաստիարակում է, քանի որ սիրում է մեզ և լավագույնն է ցանկանում մեզ համար: Աստծո օրենքներից յուրաքանչյուրը նախատեսված է մեզ պաշտպանելու համար այն երևույթներից, որոնք վնասում և կործանում են մեր կյանքը:

Դաստիարակությունն իր մեջ հույսի տարր ունի: Դաստիարակությունը տրվում է հույսով, որ այն դրական փոփոխություններ կբերի անհնազանդ մարդու կյանքում: Ինչ տեսակի դաստիարակություն էլ Աստված գործածի քո կյանքում, այն ունի ներուժ (պոտենցիա), որը կառաջնորդի քեզ՝ ավելի լավ հասկանալու, թե որն է ճիշտ ապրելու ձևը:

Դաստիարակության ձևերից մեկը մարդուն հանձնարարելն է՝ նույն բանը կրկին անել, այս անգամ՝ արդեն ճիշտ ձևով: Օրինակ, համարենք՝ դու շատ դժվարությամբ ես շփվում մի մարդու հետ, որի մտածելակերպը իրոք բարկացնում է քեզ: Ամեն անգամ, երբ շփվում ես նրա հետ, ինքդ քեզ բռնացնում ես այն բանում, որ չես կարողանում Հիսուսի պես արձագանքել նրան: Դու տեսնում ես, որ արագ բարկանում և վիճաբանության մեջ ես մտնում այդ մարդու հետ:

Աստված ուզում է, որ դու սովորես սիրել այդ մարդուն: «Միրե՞լ նրան,- պատասխանում ես դու,- ես կցանկանայի, որ նա կորչեր իմ կյանքից: Ես շատ ուրախ կլինեի, եթե նրան այլևս չտեսնեի: Իրականում նրա ու նրա նմանների ներկայությունն է իմ կյանքում, որ օրերս այսքան լարված են անցնում: Ես իրոք կկարողանայի վայելել յուրաքանչյուր օրը, եթե նման մարդկանց հետ չշփվեի»:

Աստծո դաստիարակությունը կարող է լինել այն, որ Նա շարունակ քեզ հանդիպեցնի այսպիսի «բարկացնող մարդկանց» հետ, մինչև դու սովորես նրանց բարությամբ ու սիրով արձագանքել: Իրենց վատ վերաբերմունքի համար նրանց մեղադրելու փոխարեն դու պետք է սովորես պատասխանատվություն վերցնել սեփական վերաբերմունքների ու արձագանքների համար:

Աստված ուզում է, որ դու ուղղես քո վարվեցողությունն ու վերաբերմունքը, եթե անգամ սովյալ անձնավորությունն ընդհանրապես չի փոխվում:

3. Պատիժ:

Պատիժը, ինչպես որ մենք այստեղ սահմանեցինք, ենթադրում է որոշ ցավոտ փորձություններ, որոնք գալիս են անհնազանդ մարդու կյանքում՝ նրան իր անհնազանդ քայլերի համար պատժելու: Պատիժն իր մեջ կրում է այն գաղափարը, որ անհնազանդ անձնավորությունը պետք է տառապի իր արաքների համար:

Պատժի առաջնային նպատակը խնդիրն ուղղելը չէ, այլ ստիպելն է մարդուն՝ վճարել իր անհնազանդ վարքի համար:

Պատժի հեռակա նպատակն է՝ բերել վարքի փոփոխություն: Սակայն ուղին, որը տանում է դրան, սկսվում է ցավոտ տուգանքով: «Հույս ունենք, որ պատժի ցավը քեզ կմղի փոխվելուն», - սա է պատժի հետևում եղած բացատրությունը:

Աստված հաճախ կօգտագործի դաստիարակությունը՝ որպես Իր առաջին արձագանք՝ մեզ հնազանդության բերելու համար: Բայց և այնպես, մեզնից մի մասը շատ կամակոր է և չի լսում Նրա հանդիմանությունները: Այնպես որ, Աստված հաճախակի կօգտագործի պատիժը, որպեսզի մենք տեսնենք, թե որքան լուրջ է Նա տրամադրված մեր փոփոխության հարցում:

Եթե մենք նորից անդրադառնանք Դավիթ թագավորի ու Բերսաբեի մեղքին ԲԹագավորաց 11-12 գլուխներում, կտեսնենք, որ Աստծո պատիժը նորածին երեխայի կյանքը վերացնելն էր: Դա երեխայի արարքների հետևանքով չէր, այլ

Դավթի մեղքի պատիժն էր: Դու կարող ես ասել. «Սա շատ դաժան պատիժ է»: Սակայն Աստված միշտ արդար է դաստիարակելու և պատժելու մեջ:

Որոշ մարդիկ սխալ են պատկերացնում, թե ինչպես է Աստված դաստիարակում մեզ: Նրանք իրենց կյանքում հայտնվող յուրաքանչյուր խնդրի նայում են որպես Աստծո բարկության արտահայտություն իրենց հանդեպ: Օրինակ, ամեն անգամ, երբ նրանք ոլորում են իրենց ոտքը, կամ բաժակ են կոտրում, կամ անիվն է իջնում, սա մեկնաբանում են որպես Աստծո պատիժ:

Լինում են ժամանակներ, երբ Աստված իրոք օգտագործում է մեր կյանքի իրավիճակները՝ որպես մեզ համար պատժի միջոցներ: Սակայն ամեն «վատ» բան, որ տեղի է ունենում օրվա ընթացքում, չպետք է մեկնաբանվի որպես Աստծո պատիժ: Աստված խորամանկ ճանապարհներ չի փնտրում, թե ինչպես պատժի անհնազանդ մարդկանց:

Հին Կտակարանը պարունակում է բազմաթիվ օրինակներ, թե ինչպես էր Աստված տարբեր ձևերով դաստիարակում անհնազանդ մարդկանց: Երբեմն Նա դադարեցնում էր անձրևը, ուղարկում էր միջատներ կամ բնության մեջ հանդիպող նմանատիպ այլ բաներ՝ փորձելով օգնել մարդկանց, որ տեսնեն իրենց մեղքը, ընդունեն այն և հետ դառնան, որպեսզի հետևեն Իրեն:

4. Վրեժխնդրություն:

Վրեժխնդրությունը բավականին տարբերվում է մեր դիտարկած երեք ձևերից: Վրեժխնդրությունը կենտրոնանում է սխալ արած մարդուն իր հասանելիքը վերադարձնելու վրա: Եթե Գևորգը ծեծել է քո փոքրիկ եղբորը, ապա դու պետք է ծեծես նրան կամ նրա փոքրիկ եղբորը:

Վրեժխնդրությունը սխալ արած մարդուն պատժելու պատասխանատվությունը քո ձեռքերի մեջ վերցնելն է:

Վրեժխնդրությունն անտեսում է իշխանությունների հետ ճիշտ փոխհարաբերությունը և առաջնորդների պատասխանատվությունը՝ տեսնելու, թե արդյո՞ք անհնազանդություն թույլ տված անձնավորությունը ստացել է իր համապատասխան դաստիարակությունը: Հռոմեացիներին 12:17-21-ը մեզ ասում է, թե ինչ պետք է անի քրիստոնյան վրեժխնդրության առումով: Աստված ասում է. «Իմն է վրեժխնդրությունը»:

Հռոմեացիներին 12:19.

«Միրելինե՛ր, ձեր անձերի համար վրեժխնդիր մի՛ եղեք, այլ տե՛ղ տվեք բարկությանը, որովհետև գրված է. «Վրեժխնդրությունն Իմն է, Ե՛ս պիտի հատուցեմ», - ասում է Տերը»:

Աստվածաշունչը շատ հստակ ուսուցանում է, որ մենք պետք է բարությանը ու սիրով վերաբերվենք նրանց հանդեպ, ովքեր անհնազանդ են:
Դաստիարակությունն ու պատիժը թող քո առաջնորդներին և Աստծուն:

Բոլոր անհնազանդ մարդիկ չէ, որ անմիջապես պատժվում են իրենց սխալ արարքների համար: Սակայն Աստծո Խոսքը հստակ ասում է, որ բոլոր մարդիկ իրենց կյանքի վերջում հանդիպելու են Աստծուն՝ հաշվետու լինելու իրենց արարքների համար: Հնարավոր է՝ արդարադատությունը չգա նրանց կյանքի ընթացքում, սակայն ոչ ոք չի կարող խուսափել Աստծո արդարադատությունից իր մահվան օրը:

Աստվածաշունչը լի է անհնազանդության հետևանքների ողբերգական օրինակներով: Ահա դրանցից մի քանիսը, որոնք պատմում են անհնազանդության հետևանքների մասին: Այդ օրինակներից յուրաքանչյուրին անդրադառնալիս տե՛ս նրանց արարքների հետևանքները: Ինչպե՞ս էր Աստված դաստիարակում նրանց: Աստված պատժո՞ւմ էր նրանց, ինչպե՞ս: Արդյոք մարդիկ, որ այդ դեպքի հետ կապ ունեին, փորձո՞ւմ էին վրեժ լուծել և իրենց սեփական պատիժը սահմանել մարդու անհնազանդ արարքների համար:

1. Բ Օրինաց 11:26-28
2. Ա Թագավորաց 13 & 14
3. Բ Թագավորաց 11 & 12
4. Հոբ 36:12
5. Առակաց 2:22
6. Առակաց 5:22-23
7. Առակաց 6:29
8. Առակաց 13:13
9. Առակաց 15:9-10
10. Երեմիա 12:17
11. Մադաքիա 3:7-12
12. Հռոմեացիներին 5:18-19
13. Հռոմեացիներին 6:16
14. Հռոմեացիներին 6:23
15. Հռոմեացիներին 13:1-6
16. Ա Պետրոս 2:13-17

Գ. Ինչպիսի՞ն է Աստծո վերաբերմունքն այն մարդկանց հանդեպ, ովքեր չեն հնազանդվում Իր օրենքներին:

Որոշ մարդիկ մտածում են, որ Աստված բարկանում է ամեն անգամ, երբ նրանք չեն հնազանդվում Իր օրենքներին: Նրանք կարծում են, որ Աստված սպասում է, թե երբ են նրանք թույլատրելի գիծն անցնելու, որպեսզի պատժի նրանց:

Մյուսներն ընդհանրապես անտեսում են Աստծուն և անգամ մտքով չեն անցկացնում, թե ինչ է Աստված զգում իրենց գործողությունների առումով:

Երբ մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա, ավելի շատ է անհանգստանում, թե ինչ է մտածում Աստված իր մասին: Աստվածաշունչը հստակորեն ասում է, որ Աստված սիրում է մեզնից յուրաքանչյուրին, նույնիսկ երբ մենք դեռ ապրում ենք մեղքի մեջ՝ Նրանից հեռու:

Ուրեմն, ի՞նչ վերաբերմունք ունի Աստված այն մարդկանց հանդեպ, ովքեր անհնազանդ են Իր օրենքներին:

1. Աստված տխրում է, երբ մենք մեղք ենք գործում:

Ամենաշատը Աստված տխրում է, երբ մենք մեղք ենք գործում: Երբ Հիսուսն արտասվում էր Երուսաղեմի համար, Նա ցույց էր տալիս այն սերն ու ցավը, որ զգում էր այդ քաղաքի անհնազանդ մեղավորների հանդեպ:

Մատթեոս 23:37-39.

«Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, որ սպանում ես մարգարեներին և քարկոծում նրանց, որ Քեզ են ուղարկված. քանի անգամ ցանկացա զավակներիդ հավաքել, ինչպես հավն է հավաքում ձագերին իր թևերի տակ, և դուք չուզեցիք: Ահա ձեր տունը ավերակ է թողնվում ձեզ, որովհետև ասում եմ ձեզ, թե այսուհետև Ինձ չեք տեսնի, մինչև որ ասեք. «Օրհնյալ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով»:

2. Աստված աստում է մեղքը:

Աստված աստում է մեղքը և սիրում է հնազանդությունը: Աստված չի աստում մեղավորին. Նա սիրում է նրան: Մակայն Նրա սերը բոլոր մարդկանց հանդեպ չի նշանակում, որ Նա կանտեսի մեղսալից անհնազանդությունը: Եթե դու ուզում ես դառնալ ուժեղ և հասուն քրիստոնյա, ուրեմն պետք է սովորես մեղքի հանդեպ ունենալ նույն վերաբերմունքը՝ ինչ Աստված ունի:

Նորադարձ քրիստոնյաները պետք է փոխեն իրենց մտածելակերպը հին մեղսալից արարքների հանդեպ: Իրենց անցյալի մեղսալից արարքներն ընդամենը փորձեր էին՝ իրենց առօրյայում ուրախություն գտնելու նպատակով: Հնարավոր է՝ դու դեռևս ուժգին ձգտում ունենաս դեպի այդ հին արարքները:

Այդ փորձությունները հաղթահարելու հզոր միջոցներից մեկը նոր մտածելակերպ զարգացնելն է: Փորձություններին հանձնվելու փոխարեն մենք պետք է դեմ կանգնենք դրանց ու ասենք. «Ո՛չ, ես այլևս ցած չեմ իջնի այդ ուղով: Ես ընտրում եմ Աստծուն հնազանդվելը և մեջքով շրջվելը փորձություններին: Ես ուզում եմ փորձություններին վերաբերվել Աստծո պես. Նա ասում է մեղքը, և նույնը պետք է լինի նաև իմ արձագանքը»:

Վերաբերմունքի այս փոփոխությունը կարող է ժամանակ պահանջել, սակայն ինչքան շատ ես դու դիմում արձագանքելու այս ձևին, այնքան հեշտ է լինում տվյալ փորձությանը դիմադրելը:

Եթե Դավիթ թագավորն այս ռազմավարությունն օգտագործեր այն երեկո, երբ տեսավ Բերսաբեին, դա կարող էր նրան պաշտպանել մեղքից: Նա կարող էր ինքն իրեն ասել. «Հիմա, երբ գիտեմ, որ այս կինն ամուսնացած է մեկ այլ տղամարդու հետ, ես նրա հետ հարաբերություն չեմ փնտրի: Ես գիտեմ, որ Աստված ասում է շնությունը, և ես ուզում եմ ունենալ միևնույն վերաբերմունքը, ինչ Աստված ունի շնության հանդեպ: Ես որոշում եմ հնազանդությամբ քայլել Աստծո օրենքների մեջ»:

3. Աստված համբերատար է մեղավորների ու անհնազանդ քրիստոնյաների հանդեպ:

Քանի որ Աստված սիրում է մեզ, Նա համբերատար է մեր հանդեպ: Ա Կորնթացիներին 13:4-ը մատնանշում է, որ համբերությունը սիրո առաջին նշանն է: Աստված մեզ ցույց է տալիս Իր համբերությունը՝ հետ պահելով իր արդար պատիժը, որին մենք արժանի ենք մեղք գործելու ակնթարթից: Հռոմեացիներին 6:23-ն ասում է. «Մեղքի վարձը մահ է»: Սակայն շատ ժամանակ Աստված ակնթարթային հատուցում չի պահանջում, երբ մենք մեղք ենք գործում:

Բ Պետրոս 3:9.

«Տերը չի ուշացնի Իր խոստումը, ինչպես ոմանք ուշացած են համարում, այլ երկայնամիտ է մեր նկատմամբ. չի ուզում որևէ մեկի կորուստը, այլ՝ որ ամենքը ապաշխարության գան»:

Այս համարը ցույց է տալիս, որ Աստծո համբերությունը մեր հանդեպ Նրա սիրո դրսևորումն է, և Նրա ցանկությունը, որ մենք դարձի գանք՝ մեր մեղքերից ապաշխարելով:

4. Աստված արդարադատության Աստված է:

Աստված հնագանդության և անհնագանդության յուրաքանչյուր քայլ գնահատում է մաքուր արդարադատությամբ: Հնարավոր չէ Նրան կաշառել, որպեսզի աչք փակի որևէ մեղքի հանդեպ: Նա գիտի բոլոր փաստերը: Նա սխալներ չի գործում: Նա ընդհանրապես կարիքը չունի մեր օգնության՝ որոշելու համար, թե որն է անհնագանդ մարդուն ուղղելու լավագույն ձևը:

Ոչ քրիստոնյաները հաճախ հարց են բարձրացնում. «Ինչպե՞ս կարող է սիրող Աստվածը դժոխք ուղարկել մարդկանց, ովքեր երբեք Ավետարան չեն լսել»: Մենք կարող ենք միանգամայն վստահ լինել, որ յուրաքանչյուր անձնավորության Աստված «արդար դատաստան» կանի:

5. Աստված ողորմության Աստված է:

Դավիթ թագավորի գրած շատ սաղմոսներում խոսվում է Աստծո ողորմության մասին: Սաղմոս 106:1-ը և 107:1-ը պնդում են, որ Աստծո ողորմությունը մնալու է հավիտյան: Աստծո ողորմությունը հսկայական ազդեցություն ունի աշխարհի բոլոր մարդկանց վրա: Քանի որ Աստված ողորմած է, Նա սպասում է՝ նախքան մեղավորին դատաստանի ենթարկելը: Նա յուրաքանչյուր մարդու Իր զավակը դառնալու հնարավորություն է տալիս:

Մենք՝ որպես քրիստոնյաներ, պետք է զգույշ լինենք, որպեսզի չչարաշահենք Աստծո ողորմությունը: Այն փաստը, որ Աստված ողորմած է, մեզ չի տալիս ազատություն՝ գնալու և անելու՝ ինչ ուզում ենք, իսկ հետո գալու Աստծո մոտ և նրանից ներում խնդրելու:

Աստվածաշունչ կարդալիս դու կարող ես տեսնել Աստծո ողորմությունը՝ գործնականում արտահայտված: Աստված Հովնանին ասաց, որ գնա Նինվե և քարոզի դատաստանի պատգամը: Հովնանը հնագանդվեց Աստծուն և հստակորեն փոխանցեց Աստծո պատգամը:

Հովնան 3:4.

«Եվ Հովնանը սկսեց մուտք գործել քաղաք՝ մեկ օրվա ճանապարհ անցնելով, քարոզում էր ու ասում. «Քառասուն օր ես, ու Նինվեն կործանվելու է»:

Հովնան 3:9.

«Ո՞վ գիտի, գուցե Աստված հետ դառնա ու զոջա և հետ կանգնի Իր սաստիկ բարկությունից, ու մենք կորստի չմատնվենք»:

Երբ Աստված տեսավ, որ մարդիկ ապաշխարեցին, Նա ողորմությամբ արձագանքեց դատաստանի փոխարեն:

Եթե մարդը հրաժարվում է խոստովանել իր մեղքը, ապա Աստծո ողորմությունը, ամենայն հավանականությամբ, չի փոխի իր վերաբերմունքը:

Եզրակացություն

Աստծուն հնազանդվելու որոշումը քո լավագույն ընտրությունն է: Աստծո խոստումները վերաբերում են քեզ, երբ դու հնազանդվում ես: Անհնազանդության զգուշացումները նույնպես հստակ շարադրված են:

Գաղատացիներին 6:7-8.

«Մի՛ խաբվեք, Աստված չի ծաղրվի, որովհետև մարդն ինչ որ ցանում է, այն էլ պիտի հնձի: Իր մարմնի համար ցանողն իր մարմնից ապականություն կհնձի, իսկ Հոգու համար ցանողը Հոգուց հավիտենական կյանք կհնձի»:

Մենք բոլորս էլ Աստծուն հնազանդվելու հարցում կատարյալ չենք, սակայն, երբ ձախողվում ենք, պետք է անմիջապես Աստծուն դիմենք օգնության համար: Երբ մենք խոստովանենք մեր մեղքերը, բաց կլինենք Նրա ողորմության և ներողամտության համար:

Ինչքան շատ հնազանդվենք Աստծուն սիրով լցված սրտով, այնքան շատ կվայելենք Նրա օրհնությունները մեր կյանքում: Մենք ամեն օրը կարող ենք ապրել վստահությամբ, որ Աստված պատրաստ է մեզ օգնել՝ ցանկացած իրավիճակում հնազանդությամբ արձագանքելու համար: Նա ունի պետք եղած ողջ գործությունը և միշտ պատրաստ է մեզ օգնել: